

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՍՈՒԹԱՆԷՆ ԵՏՔԸ

Հինգ յօդուածով ամփոփեցինք Հայաստանի հարստահարութեանց ընդհանրապէս տեղեկագրերը. անոնք մեր Հայրենիքին քսան տարուան՝ 1856-76՝ տանջանքին պաշտօնական պատմութիւնը կը կազմեն: Արդի սերունդը, եւ նախորդին ալ ստուար մեծամասնութիւնը, անտեղեակ էին այդ հինաւուրց հրատարակութիւններուն, որոնք մոռցուած կը մնան Ազգային ժողովին Ատենագրութեանց մէջ:

Այդ տեղեկագրերը մեր Պատրիարքարանին եւ մեր Ազգային ժողովին վարկը բարձրացնելու կը նպաստեն: Պոլիս, ուր հաստատուած է Ազգային Իշխանութեան կեդրոնը, Հայ ժողովրդին ներկայացուցիչները միշտ բազմակնճիւղ խնդիրներով յուզուած են, տակնուվրայ եղած են, իրարու դէմ թշնամացած են, զիրար հալածներ են, բայց միաշունչ, միահոգի տառապեւ են Հայաստանի ազգաներուն համար: Եկեղեցական ու աշխարհական բոլորքը մը չեն մոռցած Հայրենիքը: «Թէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ...» հառաչեր են միշտ իրենց սրտին խորէն:

Հայաստանի ժամանակակից կեանքին տարեգրութեան այդ էջերը մեր մտքին քաղաքական ուղղութեանը վրայ ազդելու կոչուած իրողութիւններ կը ներկայացնեն:

\* \*

Սուլթան Համիտին ծայրայեղ հակահայկական քաղաքականութիւնը հզօրապէս ազդած է մեր խորհելու եղանակին վրայ: Հայ ժողովուրդը կոտորել տուող անձին դէմ մեր զգացած արդար զարթոյթը մեր տեսութեան յստակութիւնը մթազնել կը սկսի: Կրնանք վախնալ որ հայկական դատը գուցէ օր մը ամբողջապէս վտանգուի եթէ Հայ ժողովրդին զօրազդութեանց միակ պատասխանատուն թիւրքիոյ արդի բռնապետը համարինք:

Մեր այս նկատողութիւնը աւելի պայծառ կերպով պարզելու համար պահ մը ենթադրենք թէ Հայոց սրտին

բաղձանքներուն համաձայն հեռագիրը վազը մեզի բերէ սուլթան Համիտի մահուան լուրը, ի՞նչ պիտի զգայ, ի՞նչ պիտի ընէ հայ ժողովուրդը: Ազգին այս օրուան ըմբռնումներուն համաձայն կրնանք այդ օրուան պատկերը աչքերնուս առջեւ բերել:

Եւրոպա, Ամերիկա Հայերը ուրախութեամբ արբշիտ իրար պիտի գրկեն. Հայաստան պիտի թնդայ ցնծութեան ձայնով մը: Պոլիս պատրիարքը ազգին ներկայացուցիչներուն զուտ անցած, Սուլթան Բէշտի գահուն առջեւ Հայ ժողովրդին սիրոյ եւ յարգանքի, այս անգամ հշմարտապէս անկեղծ, զգացումներուն թարգմանը պիտի հանդիսանայ: Հայը նոր կեանքի մը ակնկալու, յոյսերով բորբոքուած, ա՛լ պիտի թուչնայ, տկարանայ քսան տարիէ ի վեր ըրած զոհողութեանցը մէջ: Անցեալին ամբողջ պատասխանատուութիւնը, նոյն իսկ մեր ձեռքովը երբ ծանրանայ մեռնող սուլթանին վիզը, բնականաբար Եւրոպա առիթը բարեգէպ պիտի համարի սպունք մը քաշել Հայաստանի արիւնին վրայ, նոր սուլթանին թողովով երկրին փրկութեան գործը ինքնազուտ առաջ վարել:

Ետքէն: Ապագային պատասխանը անցեալը կուտայ, Հայաստանի հարստահարութեանց երկու ընդհանրապէս ընդհանրապէս տեղեկագրերն են:

Հարկ չենք տեսներ վերադառնալ այն բոլոր իրողութեանց որոնք այս էջերուն մէջ պատմուեցան: Հայաստանի հարստահարութեանց պատմութիւնը ցոյց կուտայ թէ թիւրք իշխանութիւնը սուլթան Համիտի գահակալութենէն շատ առաջ արդէն կը հետամտէր Հայ ազգը իր բռնիկ երկրին մէջ միշտ տկար պահել, ամէն տեսակ արգելք յարուցանելով անոր տնտեսական եւ բարոյական զարգացմանը դէմ, եւ զայն օրէ օր իսլամին ձեռքին տակ ստրուկ պահելու ջանալով: Հայը իսլամին համար նոյնն է ինչ որ կենդանի մը: Իր նիւթական պէտքերուն համար ինչպէս որ գրաստ մը կը գործածէ իսլամը, նոյնպէս ալ հայը: Անոր այնքան սնունդ կը թողու որքանը անհրաժեշտ է ողջ մնալու եւ աշխատելու համար. եւ այնքան թուով կուզէ հայ պահել որքանին ինք անհրաժեշտ պէտք ունի. ո՛չ աւելին: Ո՛չ ոք իրեն հարկաւոր չեղած կենդանիները կը պահէ: Այս քաղաքականութիւնը օսմանցիներուն թուականէն սկսած է: Եթէ յաջողութիւնը կատարեալ չէ եղած, պատճառները բազմադիմի են: Հայ

ցեղին տոկունութիւնը եւ խելքը, մեր երկիրը աշխարհա- կալոյննորուն տկար քաղաքակրթութիւնը եւ քրիստոնէ- ութեան հակառակող կրօնքը հայ ազգին պահպանութիւն մեծապէս սատարած են: Ապրած ենք եւ կ'ապրինք հա- կառակ իտյամական ծրագրին: Բայց այդ ծրագիրը ամե- նապատիկ փոփոխութիւն մը իսկ չէ կրած. իտյամական քա- ղաքական դաւանանքն է:

Մենք տեսանք թէ Ալի փաշա մը որ եւրոպականաց- եալ պետական անձնատրութիւն մը կը համարուէր, Մահ- մուտ Նէտիմ փաշա մը որ խղճամիտ հին թիւրք մը նկատ- ուած էր, Միտհատ փաշա մը որ նոր քաղաքական ազա- տասէր դպրոցի մը պետն էր, Բուշտի փաշա մը որ ազ- նուարարոյ եւ կարող մարդու հոշակը կը վայելէր, Հիւսէյին Ափի փաշա մը որ արդարասէր զինուորական մը կ'ըսուէր, ասոնք ամէնքն ալ քիւրտ քայմաքամ մը, ինչպէս Շահ Հիւսէյինը, չուզեցին իրեն տեղէն շարժեցնել. վասն զի քիւրտ մը հայուն դէմ գործած բարբարոտութիւններուն համար պատժելով մեղանշած կ'ըլլային ընդհանուր դրու- թեան դէմ:

Ո՛չ մէկ եպարզօս պատրիարքարանին ո՛ր է մէկ չնչին խնդրանքը Հայաստանի համար նկատողութեան տուած է. սքանչելապէս յարուած մեքենայ մը պէտք չէր խանդարել: Ու այդ բոլոր փաշաները իրենց խորհրդական եւ մտերիմ բարեկամ ունէին ականաւոր հայեր, որպիսիք էին՝ Սերվիչէն, Օտեան, Տատեան, եւ այլն: Այս բոլոր հոյակապ հայերը անկարող գտնուեցան քիւրտերուն հա- յոցմէ յափշտակած մէկ ոչխարը իսկ ետ դարձնել տալ: Եւ չէին ալ կրնար. պետական պահանջումները տեղի չեն իտար բարեկամական նկատողութեանց: Թիւրք նախա- րարները տաղանդաւոր Հայոցմէ կ'օգտուէին ընկերակ- ցութեան համար, կամ այնպիսի գործերու համար որոնք ո՛ր է անոնցութիւն չէին կրնար սեննալ Հայաստանի օգ- տաւէտ առաջարկներու հետ:

Ու այդ մեծանուն, Եւրոպայի համակրանքը վայելող նախարարներուն, եւ «ագնուամիտ» սեպուած սուլթան- ներու օրովն էր որ Հայաստան կը մարտիրոսանար իր հաւատքին մէջ, կը բռնաբարուէր իր էն սուրբ զգացում- ներուն մէջ, կը հարստահարուէր իր տնտեսական կեանքին մէջ, եւ սակայն դուրսը ճիգ մը չէր լսուեր:

Սուլթան Համիտ իր իշխանութեան առաջին տարիները քաղաքականութեան մէջ անփորձ էր, իր վարպետը եւ առաջնորդը Քիւչիկ Սայիտ փաշան եղաւ: Այդ սատ- րագամը սաստկապէս հայահալած քաղաքականութեան հետեցաւ, ու ինքն էր որ կտրուկ դաւանանքի մը մէջ ամփոփեց հայկական խնդրին լուծման բոնաձեւը. «Հայ- կական խնդիրը կը ջնջուի Հայոց ջնջումովը» վճռեց: Ու այդ փաշան ազատական թիւրքերուն էն մեծ յոյսն է ա- պագային համար:

Մեր ազգային ծրագիրը պէտք է ըլլայ հայ աշ- խարհին ապագան ազատել ո՛ր է սուլթանի, ո՛ր է նա-

խարարի բարի կամ չար կամեցողութեան պատահակա- նութիւններէն: Սուլթան Համիտ արիննուշտ բռնապետ մըն է, բայց կրցա՛ւ շարիք մը հասցնել Սամուի կամ Լի- բանանու, որոնք այս քսանհինգ տարուան մէջ այնքան հանգիստ ապրեցան ինչքան թիւրքիայէն ազատագրու- եալ ո՛ր է նահանգ: Ո՛չ. վասն զի շարիք ընելու իր իշ- խանութիւնը ջլատուած էր այդ երկիրներուն կազմա- կերպութեամբը. մինչդեռ այդ միկնոյն Լիբանանը ջար- դուեցաւ «բարեհամբոյր» համարուած սուլթաններու օրով:

Արեւելեան խնդրին երեք քառորդ զարու պատմու- թիւնը կը հաստատէ թէ եւրոպական պետութիւնները ո՛ր է սուլթանի անձին չղպան անոր հպատակ նահանգները ազատագրելու պարագային: Յունաստանի, Բուսանիոյ, Սերպիոյ, Պուլկարիոյ, Լիբանանի վիճակը հիմնովին փոխուեցաւ առանց սուլթաններու գահընկեցութեանը կամ մահուանը: Եւ դեռ երէկ կրեւելն չազատուեցա՛ւ սուլ- թանին մէկ մազը իսկ չլնասուելով: Սուլթան մը որքան աւելի վայրագ ու շարագործ երեւի Եւրոպայի առջև այն- քան աւելի կը նպաստէ իր քրիստոնեայ հպատակներուն ազատագրութեան գաւտին: Ալի, Միտհատ փաշաներու քաղաքականութիւնը որ արտաքին երևոյթները փրկելով հայերը լուծեան մէջ խղճելու կը ձգտէր, աւելի աղիտա- բեր պիտի ըլլար Հայաստանի քան թէ Համիտի մոլեգնուտ մարդասպանութիւնը: Պիտի մարէինք կանթեղի մը պէս որուն պատրոյգին իւրը կամացուկ կամացուկ կը հատնի կը լմնայ:

Հայաստանի վիճակին բարելաւման յոյսը սուլթան Համիտի մահուանը վրայ կեդրոնացնելու ձգտումը եթէ աւելի զօրանայ ան ատեն մեր ազգային գործունէու- թիւնը պիտի ջլատուի, սպասողական զիրք բռնելու յանձ- նառու պիտի ըլլանք, եւ յուրաբար պիտի սպասենք որ Ազարյէլը այցելէ սուլթան Համիտին: Չենք կրնար գու- շակել թէ այս սպասումը որքան ատեն կրնայ տեւել, բայց այն օրը որ մեր փափաքին հասնինք այն օրը իսկ պիտի զգանք մեր յուսախաբութիւնը. հակահայկական քաղա- քականութիւնը պիտի շարունակուի, եւ մենք արդէն կոր- սնցուցած պիտի ըլլանք բողոքելու, գործելու կարողու- թիւններնիս: Եւրոպա մեզի «սպասեցէք նոր սուլթանին բարեացակամութեանը» պիտի պատասխանէ:

Սուլթան Համիտին աներևութացումը հաւանակա պատահականութիւն մըն է, Բայց մենք շատ կը սխալինք եթէ բոլոր յոյսերնիս պատահականութեանց վրայ հանգչեցնենք. ապագան պատրաստելու ենք զրական միջոցներով որոնց իրականացումը մենք կա- խում ունենայ:

Իբրեք չմոռնանք որ երբ օտար ցեղ մը ուրիշ երկիր մը կ'աշխարհակալէ, անոր բնիկ ժողովուրդը իր մէջ ձու- լելու կամ անհետացնելու կը հետամտի: Թիւրքն ալ աշ-

խարհակալութեան այս ընդհանուր սկզբունքին համեմատ գործած է, կը գործէ ու պիտի գործէ: Մենք մեր ուժովն է եւ խելքովը, ու Եւրոպայի աշակցութեամբը, որ պիտի պարտաւորենք իսլամ տարրը հրաժարիլ մեզի բնաշինջ ընելու նպատակէն: Թիւրքին բարեացակամութեանը երբեք չ'սպասենք, այլ մեր զօրութեանը եւ աշխատութեանը ապաւինինք:

ԺԱՄԱՆՈՎԱԿԻՑ ԴԷՄՔԵՐ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Պոլիս ութ տասը տարի առաջ կարգ մը անձեր, մասնաւորապէս Եւրոպայէն դարձողներ մեզի կ'ընէին.

— Փորթուգալեանը տեսնելու է Մարսէլլ. օր մըն է իրեն է բացուեր. մէկ կողմէն խանութ կը գնէ, եւ հիմակ ալ 100,000 ֆրանք արժողութեամբ արարքուն մը շինել կուտայ:

— Ստակը ուսկից կը գտնէ, կը հարցնէի հեգնութեան քսածիծաղով մը:

— Ո՛ւսկից պիտի գտնէ. ազգին ազատութեանը համար իրեն տրուած կարմրուկ ոսկիներէն խաւիւն կ'ընէ:

— Ուրեմն իրեն շատ աւելի մեծկակ գումարներ յանձնուած է:

— Անշո՛ւշտ: Ամէնքը չէր կրնար ուտել:

Այս իմաստով ամբաստանութիւններ լսեցի շատերէն: Ոմանց շարամտութիւնը ակնբեր էր, ուրիշներու ալ ապուշութիւնը անտարակուսելի: Երբ Չարութիւնը եւ Ապուշութիւնը իրարու կը դաշնակցին, զօրութիւնը անգիմաղորդի է, գոնէ առժամապէս: Ուրեմն հայ ժողովուրդը առանց ո՛ր է գժուարութեան պէտք էր հաւտար թէ Փորթուգալեանը Ազգային ազատագրութեան դատին զբաժնէ խնայողութիւններ կրցած էր ընել և անով հարստանալ: Այդ հաւատացեալներուն զիտողութիւն մը ներկայացուցի: Հայաստանի մեծ սովուն Ներսէս Պատրիարքին նախագահութեամբ կազմուած Յանձնաժողովը ամբողջ հայ տշխարհը յուզել է յետոյ, հազիւ կարող եղաւ այնքան գումար մը հասցնել սովատանջ Հայոց որքանը հիմակ կ'ենթադրուի թէ հայ ժողովուրդը ինքնաբերաբար պարզ խմբագրի մը ձեռքը լեցուցած ըլլայ: Դիտողութեանս դէմ ջախջախիչ պատասխան մը չլսեցի. բայց տրամաբանութիւնը նախապաշարեալ մտքերու վրայ այնքան ազդեցութեամբ կը ներգործէ որքան շուրջ սագին փետուրներուն:

Փորթուգալեանին հարստութիւնը հասարակաց մտքին մէջ երկրաշփոխական յառաջտուութեան օրէնքով կ'աճէր ու կը բազմանար: Երբ Եւրոպա անցայ ու Եգիպտոս, երևակայութեանց մէջ արդէն կրկնապատկուած ու եռապատկուած գտայ այդ 100,000 ֆրանքի հարստութիւնը: Ու Երևակայութեան մեր հանրային կեանքին մէջ կատարած դերը անձանօթ չէ ոչ մէկերնուս:

Վերջերս Մարսէլլ բարեկամէ մը խնդրած էի ինձի տեղեկութիւն հաղորդել Պ. Փորթուգալեանի վիճակին վրայ: Ինչ որ ինձի գրուեցաւ կը վարանիմ հրատարակել: Ոչ մէկուն նիւթական վիճակը կարող ենք առանց արտօնուելու հանրութեան ծանօթացնել: Բայց այս պարագային մէջ փափկանկատութեան հակառակ վարուած ըլլալ չեմ կարծեր, կարճ ակնարկութիւն մը երբ կ'ընեմ: Աւելի քան կրեւոր տարի ամբողջապէս Հայաստանի եւ հայ ազգին նուիրուած կեանքի համար անշուշտ անպատուաբեր պիտի չհամարուի նիւթական ծանր տառապանք. ներու վիճակի մէջ գտնուիլ, երկարատեւ ընթացքէ մը յետոյ:

\* \* \*

Ազգին մէջ բազմաթիւ տարիներէ ի վեր կարեւոր դիրք զբաղող անձնաւորութիւնները որ այլ ևս նորութեան հրապուրովը չեն հմայեր հասարակութիւնը, յանկարծ իրրե օրուան մարզը երևան կուգան երբ անսպասելի գործ մը զիրենք ի տես կը գնէ, կամ թէ մահը կ'առնէ կը տանի, եւ կամ զժաղգութիւն մը կը ծանրանայ իրենց վրայ: Յուսալով, և սպասելով, որ Պ. Փորթուգալեան մեր հանրային կեանքին մէջ զօրաւոր գործողի մը դերքովը վերջապէս երևան գայ, Արմէնիայի հիմակուհի մա զաղարու մը բաւական ծանր զժաղգութիւն մըն է, եւ հանրային ուշադրութիւնը իր խմբագրին վրայ հրաւիրելու պատեհութիւնը կ'ընձեռէ:

Պ. Մկրտիչ Փորթուգալեանի կենսագրութիւնը ի մի ձուլուած է հայ ազգին այս քառորդ դարուս կեանքին հետ, կեանք մը որ իր հանդարտընթաց, միօրինակ զարաւոր գնացքին մէջ յանկարծ խռովեցաւ, յուզուեցաւ, փոթորկեցաւ: Ալիկոծումի այդ պատմութեան մէջ Փորթուգալեանի զրուագը նկարագրելու համար, նախ ձեռքիս ներքեւ ունենալու էի Աւիտի եւ Արմէնիայի հաւաքածայները: Ո՞ր գտնել:

Եւրոպա գալէս ի վեր օր չ'անցնիր որ չկսկծամ անհեռետեսութեան մը համար: Ինչո՞ւ հայ խմբագիրները, հայ հեղինակները, հրատարակիչները երբեք չեն մտաբերած իրենց թերթերէն կամ զրքերէն մէյմէկ օրինակ նուիրել շնորհիւ եւ Բարիզի մատենադարաններուն, ուր անվտանգ ապահովութեան մէջ կը մնային հայ մտքին բոլոր արտադրութիւնները, ազգային պատմութեան բոլոր ստուգարանները: Հո՞ն կը զիմէինք իբր հայ ազգային մատենադարանի մը, մեր ուսումնասիրութեանց համար: Ո՞վ

մտաբերած է երբեք պատահականութիւնը ուր կը գրտնուինք. նոյնիսկ մենք օր մը մտքերնուս անցուցինք մեր հրատարակած թերթերէն - մէյմէկ օրինակ ալ լռնտոն, Բարիզ զրկել. եւ հիմակ կարօտը կը քաշենք անոնց:

Ու յետոյ, այլ եւ ո՛ր երբեք գտնել այն նամակները, այն տեղեկագիրները զոր չորս տարի անընդհատ շարունակութեամբ Փորթուզալեան Հայաստանէն մեզի կը թըռցնէր, մենք՝ Պոլսէն իրեն: Վերածնունդի թուական մը ողջունող այդ 1876-1880 տարիներուն մեր բոլոր ըզձանցները, մեր սրտի տրոփումները, մեր խորհուրդները, մեր ձեռնարկները, Հայաստանի կեանքը աւանդած ենք այդ նամակներուն: Անոնցմէ ո՛րը կրակի տրուեցաւ, ո՛րը չեմ գիտեր ինչ խոնաւ խուցերու մէջ մզլոտելու գատապարտուած, ո՛րը Հայաստան հողին տակ թագցուած, գուրգուրացող խնամուտ ձեռքերէ: Ու յիշատակներ են որ կուզան կը պլպլան աչքերուս առջեւ:



Որոշ թուանշաններով չեմ կրնար ճշգրտել թէ Մկրտիչ Փորթուզալեան անունը երբ հնչուեցաւ մեր մէջ: Սրուան ձտեանց Եպիսկոպոսին Թորոս Աղաբաբը այդ երիտ սասարղը կը ներկայացնէ մեզի իբր յեղափոխական Եւզոկիոյ բանտը նետուած շղթայակապ: Կը կարծեմ թէ Ներսէս պատրարքին պաշտօնավարութեան ժամանակէն առաջ էր որ այդ զէպքը պատահած է: Այդ ժամանակները հայ ժողովուրդը տակաւին ընտելացած չէր քաղաքական յանցապարտութեան գաղափարին. Փորթուզալեան «նախավաներու» շարքին մէջ կը տեսնենք:

Ներսէս Վարժապետեան երբ Պատրիարք էր, Գուռը քաքրիք մը գրելով Ասիա անուն թերթին ջնջուած պահանջեց. այդ խնդրանքին առանց ո՛ր եւ է դժուարութեան գոհացում տրուեցաւ: Այդ առթիւ էր որ Փորթուզալեան անունը ընտանեցաւ մեզի: Հալածանքը այդ նոր զէմքը սրբացուցած էր:

Ասիաի արտօնութիւնը հայու մըն էր որ բժշկի պէս բան մըն էր, խմբագրութիւնը ձեռքէ ձեռք անցնելէ յետոյ հասած էր Պ. Փորթուզալեանին: Երիտասարդ հրապարակագիրը որ Գուռ-Գաբուի վարժարանը դեռ աշակերտ եղած ատեն Սահմանագրութեան մարտնչութիւններուն հանդիսատես մըն էր, ու թերեւ մասնակից մը պայքարներու ու յարձակումներու, այժմ ջերմ Խորիմեանական մըն էր: Ներսէս Պատրիարք չէր վայելէր այն տաք ժողովրդականութիւնը որուն արժանացաւ ուսուցիչը պատերազմէն ետքը: Գեղադէմ ու գեղախօս երիտասարդ, գրաւիչ յատկութիւններով օժտուած, բայց Հայրիկի շունչէն զուրկ իմաստասիրական, կրօնական, քաղաքական ազատամիտ գաղափարներու հակառակորդ, թրքասէր քաղաքականութեան ներկայացուցիչ, Հայաստանի վիճակին յօտէն անծանօթ, Ներսէս Վարժապետեան Պատրիարքական ա-

թոռին վրայ Հայրիկին տեղը չէր կրցած բսնել: Փորթուզալեան այդ Պատրիարքը տապալելու ձգտող կուսակցութեան կը պատկանէր: Այս խնդիրներուն վրայ ձեռնհասութեամբ գրելու վիճակի մէջ չեմ, եւ կը փափաքեմ որ Պ. Փորթուզալեան քիչ մը հանգիստ երբ առնէ, ինք ծանօթացնէ իր յիշատակները:

Ասիան երբեմն երբեմն կարգալու առիթ կունենայի: Ո՛չ Մասիսի ծանրութիւնը կը գտնէի հոն, ո՛չ Օրագիրին յանգստութիւնը. գրական հրապոյր մըն ալ չունէր, բայց չեմ գիտեր ինչ շեշտ մը կար որ կը քաշէր գիտ: Կը գպայի թէ խմբագիրը, ինծի անծանօթ, ազնիւ հայ մը ըլլալու էր. խոռվեալ սրտի մը ազազակը կը լսէի: Այդ հրապարակագիրը 1876ի առաջին ամիսները Օրթագոգ բարեկամի մը միջոցաւ ճանչնալու պատահականութիւնը ունեցայ: Առաջին տեսակցութեանս տպաւորութիւնը ուրիշ առթիւ գրած եմ: Բուպէական յուսախարութիւն ունեցայ իր մարմնական տեսքէն: Ինէ դատ ուրիշներ ալ, աւելի հանդիսաւոր պարագաներու մէջ, այդ պատրանքը կրած են: Եւզոկիա երբ հայ «խոռվարարները» կառավարչին ներկայութեանը կը հանեն, փաշան ամէնուն վրայ արհամարհական ակնարկ մը նետելով, ոստիկաններուն Փորթուզալեանը կը հարցնէ.

- Ա՛ն ո՛ր է, ան բերէք, կը հրամայէ:
- Ահաւասիկ, կ'ըսեն, ցոյց տալով նիհար, փոքրիկ, խարտեաչ երիտասարդը:
- Ա՛ս է մի, կը մըթմըթայ փաշան ուսերը վեր վերջնելով, արհամարհական հեգնութեամբ: Ու ալ վախ չունենար:

Թիւրք փաշան հոգեկան ուժի վրայ գաղափար մը չունենալով, արտաքին պատեանէն կը դատէր յեղափոխականին զօրութիւնը: Իմ վարանուծս անցողական էր. քիչ մը տեսակցութենէ յետոյ աւելի լաւ ճանչցայ այդ ամուր հոգուով երիտասարդը: Իր խօսակցութիւնը տաք էր, լըրջախոհ. յայտնած գաղափարները իրենց պնդութեամբ ուշադրութիւնս կը գրաւէին: Իմ ճանչցած փափուկ, օղակիւն, քաղցրաբոյր երիտասարդներէս շատ արբեր զէմք մը կը ներկայանար աչքիս առջեւ: Կը զգայի թէ այդ հրապարակագիրը սալոնի մարդ մը չէր, բայց պատերազմի մարդն էր: Գաղափարը զոր այդ օրը սկսայ ունենալ Պ. Փորթուզալեանի վրայ հետզհետէ աւելի բարձրացաւ հանրային կեանքին մեր վրայ դրած պարտականութեանց մէջ:

Այդ հանդիպումիս վճռական ազդեցութիւն պիտի ունենար մեր կեանքին ընթացքին վրայ. պիտի արտազրէր հայ ազգին համար գործեր որոնք հաւանօրէն տարբեր ուղղութեամբ, տարբեր պայմաններու մէջ երեւան գային եթէ Պ. Փորթուզալեան եւ ես իրարու անձնապէս անծանօթ մնացած ըլլայինք:

Մանգոռնի խմբագիրը Պ. Փանոսեան վարժարան մը հիմնած էր Ղալաթիա, մեր եկեղեցիէն քիչ մը հեռու,

Թոփհանէի բարձունքներուն մօտ. հոն ուսուցիչ էր Պ. Փորթուզալեան, զիշերներն ալ հոն մնալով: Իրիկուն մը գացի գտայ զիեքը, ու Թոփհանէի պողոտային վըրայ մինչեւ Գոսպաթաշ շրջագալութեամբ երկար խորհրդակցութիւն մը սենեցանք Հայաստանի վիճակին վրայ, և ապագայի ձեռնարկներու մասին:

Այս էջերուն մէջ արդէն համառօտաբար պատմած եմ Արարատեան ընկերութեան հիմնադրութիւնը, եւ Վասպուրականի մէջ նախնական ու երկրորդական կրթութեան զարգացումը, սետի կրկնութեան մը պէտքը չեմ տեսներ, թէ և այդ խնդիրներուն վերագառնալու առիթը պիտի ունենամ երբ կարգ մը վաւերական հրատարակութիւններ կարենամ ձեռք անցընել:

Վարժապետանոցին տնօրէնը իր մտքին ամբողջ կարողութիւնը, իր հօգիին բոլոր զօրութիւնը ցոյց տուաւ այդ դժուար պարագաներուն մէջ: Անձնուէր մը եղաւ բառին ամբողջ առումովը: Երբեմն պատահած է որ իր վրայ խօսողները զինքը բնիկ Վանեցի կարծեն: Սխալում մը որ մեղմացուցիչ պարագաներու փաստաբանութեամբ կրնայ արդարանալ: Ո՛չ ոք շատ մեղադրելի է երբ չմտաբերել թէ Պոլիս ծնած ու Պոլիս մեծցած երիտասարդ մը այդպիսի շեք մտքով Վասպուրականի փարած ըլլայ: Եւ ընդունինք որ մեր հանրային կեանքին պատմութեանը մէջ եզական երևոյթ մըն է այն խորին յարգանքի և անհուն համակրանքի զգացումը զոր բոլոր Վանեցիները կը տածեն Պ. Փորթուզալեանի համար: Երախտագիտութիւնը որ ազնիւ զգացումներու ազնուագոյնն է թերևս, երբ ուժգնօրէն կը յայտնուի ժողովրդի մը սրտին մէջ, բարոյական ուժի մը մթերումը կը հաւաստէ:

Վարժապետանոցին տեսուչը երբ Վասպուրականի մէջ իր կրթական պարտականութիւնները, որոնք այնքան ծանր էին, կը կատարէր, միևնոյն տոնն հանդէսի մը հրատարակութեան գաղափարն ալ յղացաւ, Վարազի տպարանէն: Բուն տոհմային գրականութիւնն չափաւորանի հօդին վրայ պիտի հիմնուէր: Յօդուածներուն ձեռագիրները Պոլիս զրկեց որպէս զի Հանրային կրթութեան պաշտօնատունը զանոնք սրբազրէ, վաւերացնէ, եւ մենք պիտի վերագարձնէինք զանոնք Վան, տպագրուելու համար: Հանդէսին անունը Քոչարակ գրած էր: Նոյնիսկ այդ անունին ընտրութիւնը ի վեր կը հանէ գաղափարներու ուղղութիւնը որուն կը ծառայէր Պ. Փորթուզալեան: Ո՛ր Հայրիկի Արժիշ Վասպուրականին, ո՛ր Քոչարակը: Հայ միտքը երկնաւազ բարձունքները սաւառնելէ յետոյ վար կ'իջնէր, հօդին վրայ, կ'երթար մշակին քով անոր քովմանին հետ ապրելու, քիչ մըն ալ այս երկրաւոր աշխարհիս մէջ անոր առաջնօրդելու: Երկինքէն երկիր իջնել, անկում մը թերևս, բայց յառաջգիծութիւն մը ապահովաբար: Զուրբը լեռներէն վար իջնելով է որ գետերը կը սահողծեն, արտերը կ'ոռոգեն ու մարդկութիւնը կ'ապրե-

ցնեն: Պոլսոյ թրքական իշխանութիւնը չթողարեց որ Պոլիս սրբազրուած եւ վաւերացուած յօդուածներ Վան հրատարակուին, ուստի եւ այդ բարերար գաղափարը մնաց անզորմարդելի:

Վարժապետանոցին խեղդամահ սպաննութիւնը եթէ Հայաստանը անկեղծօրէն սիրող բոլոր Հայոց սրտերը խոր խոցեց, դիւրին է երևակայել թէ որքան արիւնեց սիրտն այն երիտասարդին որ իր հօգին նուիրած էր անոր: Անընկճելի կամբ, որ սակայն չընկճեց սու, ու Պ. Փորթուզալեան, Ներսէս Պատրիարքի պաշտպանութեամբը, շարունակեց այդ հաստատութիւնը քանի մը տարի եւս, Կեղրոնական Վարժարան անունով: Բայց երբ վախճանեցաւ այն պատրիարքը որ մէն սուլթանը կ'ահնաժէր, այլ եւս Հայաստան կը մեար անպաշտպան: Անոր յաջորդին օրովը Խրիմեան Հայրիկ Վանէն Պոլիս աքսոր բերուեցաւ, եւ Կեղրոնական Վարժարանը փակուեցաւ: Վեհապետեան Յարութիւն եպիսկոպոսը պատրիարք էր եւ Նուրեանը վարչապետ:

\* \* \*

Գարնան առտու մը 1885ին, Պոլիս եկեղեցականներ ու աշխարհականներ հետզհետէ Արևելքի խմբագրատան մէկ սենեակը հաւաքուելով սրտատրոփ կը սպասէին հեռագրի մը որ աւետիս մը պիտի բերէր կամ գուժ մը: Հեռագրատան ցրուիչը կէս օրին մօտերը եկաւ. թուղթը ձեռքէն խլեցի. զայն բանալու բոզկիս մեր բոլոր հիւրերը զուլտ թառած կը լափէին լակոնական պարունակութիւնը: Հայրիկ կաթողիկոս չէր ընտրուած: Սքեռած մնացինք: Տրտմութեան այդ պահուն մեր քովն էր եւ քարուքանդ Վարժապետանոցին տնօրէնն ալ, որ ամէնէս աւելի վըրտահար երեցաւ: Հայաստանէն կուգար, ու կը զգար սաստկութիւնը հարուածին զոր այդ դուժը հայ ժողովրդին սրտին պիտի զարնէր: Քիչ ժամանակէն Պ. Փորթուզալեան Պոլիսը թողուց գնաց:

Այդ աներևութացումէն երկու ամիս ետքը օր մըն ալ Պ. Փորթուզալեանի խմբագրութեամբ Արմէնիա անուն թերթի մը հրատարակման յայտագիրը ստացանք: Ծանուցումը Արևելքի մէջ տպագրուեցաւ առանց անունին: Պոլսոյ ուրիշ թերթեր աւելի համարձակութեամբ վարուելով չ'ընչեցին Արմէնիա անունը, Արևելք ալ յաջորդ օրը այդ օրինակին հետեցաւ: Արմէնիաի երեւումին վրայ շատ շանցած անոր թիւրքիս մուտքը պաշտօնապէս արգիւտեցաւ:

Վարժապետանոցին վերջնական կործանումէն ետքը Պ. Փորթուզալեան կրնար խղճի հանդարտութեամբ հաստատ թէ այլ եւս հանգստանալու իրաւունքը կը վայելէր: Իր կորովի երիտասարդութիւնը Հայաստանի զարգացման նուիրելէ յետոյ, հիմակ հզօրագոյն ուժին առջեւ միայն տեղի տալու անխուսափելի հարկին մէջ կը գտնուէր:

Բայց իր ազգին համար համոզմամբ եւ սրտանց աշխատող մը երբեք չկրնար հանգստանալ: Հանրային կեանքի մէջ ու՛ր իր պարտականութիւնը կատարած ըլլալու գոհունակութեամբը կը բաւականանայ ու այլ եւ իր անձը կը խորհի միայն, այնպիսին անձնասէր եսամոլէ մը շատ, կամ թէ բնաւ, տարբերութիւն չունի: Մայրը որ իր հիւսնոց որդին կը խնամէ երբեք «ա՛լ այսքանը բաւական է, ես իմ պարտականութիւնս կատարեցի, թող քիչ մըն ալ ուրիշներ աշխատին» ըսելով իր զաւկին մահիծին սնարէն չհեռանար: Պարտականութեան զաղափարը չէ որ մայրը անձնութեան կը մղէ, այլ սէրը: Սէրը անյագ է, սէրը գոհանալ չգիտեր, սէրը «բաւականութիւն» բառին զէմ կ'ըմբոստանայ: Մեր դժբաղդութիւններէն մէկը կը այն է որ ազգին բարիքը ուզող եւ այդ նպատակաւ ալ աշխատող Հայոցմէ շատերը հայ ժողովուրդը չեն սիրեր իրենց սրտին խորէն մայրական կոյր, մոլի սիրով: Մայրեր չեն անոնք այլ պարզապէս բարեկամներ, ազգականներ որոնք քիչ մը յոգնելէ ետքը ներողութիւն կը խընդրեն ու կը մեկնին հիւանդին տունէն: Ինչ որ զբացանական կամ ազգակցական պարտականութիւններն էր զայն կատարած են, ալ ի՛նչ կը պահանջուի իրենցմէ: Պ. Փորթուզալեան հայ ժողովրդին համար մօր մը սէրը կը տածէ: Ձինքը տեսած եմ այնպիսի պարագաներու մէջ ուր այլեւս ձանձրոյթը, տկարացումը շատ ներելի մեղքեր պիտի համարուէին, բայց անիկա երբեք իր պարտականութիւնը կատարած, վերջացուցած ըլլալու զաղափարը չը կրցաւ յղանալ:

Այն պահուն երբ Պ. Փորթուզալեան Հայաստանի մէջ գործելու համար իր զէմը կը գտնէր կառավարական բացորոշ արգելքը, այն պահուն նաև կը զգար թէ իր գերը վերցացած չէր:

Ներքէն Պատրիարքին մահէն ետքը Հայաստանի իրական վիճակը ընդհանուր Հայոց եւ Եւրոպայի աչքին սքողել տալու ջանքը ակնբեր տեսնուեցաւ: Կ. Պոլսոյ Ազգային Ժողովը Նուրեան Էֆէնտիի նման անձնաւորութիւն մը 1885ին Թիւրքիոյ Հայոց վարչապետութեան պաշտօնին կոչելով գործնականապէս հայ ազգին կը յանձնարարէր Թիւրքիոյ իշխանութեան պահանջումներուն կատարեալ համակերպութիւն: Այլ եւս Պատրիարքարանը ո՛չ ազգին պիտի ծանօթացնէր, ո՛չ Եւրոպայի, Հայաստանի իրական կացութիւնը: Կ. Պոլսոյ մամուլը որ երբեմն գոնէ տկար արձագանգ մը կուտար Հայաստանի հառաջանքներուն, արդէն շատոնց էր որ խոր լուծիւն պահելու դատապարտուած էր: Հազիւ թէ Կովկասի հայ մամուլին մէջ հնարաւոր կ'ըլլար մերթ ընդ մերթ հայ աշխարհին պատկերը նկարագրել. բայց կովկասեան թերթերն ալ գրեթէ չէին կրնար ազգել ոռտական հոգին դուրս: Հայ աշխարհի վրայ մեռելական ծածկոյթ մը կը նետուէր, անոր տակ հօգեվարքը անձայն անշնչակ լմընցնելու համար: Ու գտնուեցաւ մարդ մը որ այդ ծած-

կոյթին ծայրէն ինքն ալ բռնեց մէկդի նետելու, եւ թէ մեռել մը չի կար անոր տակը, այլ վիրաւոր մը միայն զոր պէտք էր դարձանել եւ առողջացնել: Այդ մարդը վիրաւորը մօտէն քննած էր: Գիտէր թէ թշնամին իր դանակը դեռ անոր սիրտը չէր խրած, դեռ անոր ոսկրոտին իր թակովը ջախջախելու կարող չէր եղած. ողջ էր ուղեղը: Անօթի քանասարները անոր մարմինն ժասերը միայն կը յօշոտէին: Թող տալու չէր որ անոնց ակոսները մինչեւ ոսկորները կրծելու հասնէին: Եւ ահա Փորթուզալեան սկսաւ Հայութիւնը զրդեցնել, Հայրենիքին սպառնացող վտանգին ազդարարութեամբը:

Այդ հայը շատ մօտէն կը ճանչնար իր երկիրը, ու հոն թողած էր բարեկամներ որոնք ներշնչեալ հաւատքով զինքը իրենց մարգարէն կը զաւանէին: Ամուր կապերով կապուած էր Թիւրքիոյ մայրաքաղաքին հետ, եւ իր յարաբերութիւնը ընդարձակ էր Կովկասի եւ Պարսկաստանի Հայոց հետ: Մենաշնորհեալ դիրք մը կը վայելէր, շնորհիւ իր շատ տարիներու խելացի եւ բարեհամայր անձնութեանը: Իրեն ներելի չէր հանգստաւէտ կեանքի մը տենջանքովը մեղմանալ, ու իր ազգէն զրկել այն բոլոր բարիքները զոր կրնար անոր ընձեռել իր փորձառութեամբը եւ վայելած ժողովրդականութեամբը:

Մահուան նախակարապետ հանդարտ քննածութենէ մը ազգը արթնցնող կոչնակը եղաւ Արմէնիան: Արտասահմանի հայերը որոնք Սան-Սթեֆանոյի եւ Պերլինի կաթակներու լոյսէն հեռաւոր հայրենիքն էին նշմարած, հիմակ յուսախաբական լքումի մատուցած, կամաց կամաց կը մոռնային իրենց դժբաղդ եղբայրները: Աչքէ հեռու սրտէ հեռու: Արմէնիա այդ սրտերուն սլաքը միշտ զէպի հայրենի բեւեռը ուղղեց: Ոգեւորող շունչով մը Հայաստանի ժողովուրդը իր փրկութեան հաւատքին մէջ ամրապնդեց: Խորհրդանշան մը եղաւ Հայութեան համար, ու ամէնքն ալ մտքով ու հսգով պահ մը անոր շուրջը բոլորեցան:

Արմէնիայի պատմութիւնը մինչեւ իսկ համառօտաբար գրելու ձեռնհաս չեմ, ուստի այդ աշխատութիւնը ուրիշներուն կը մնայ ընել: Հազիւ թէ Պոլսոյ այդ թերթին մէկ քանի թիւերը կրցեր եմ տեսնել, թէ քան մինչեւ 1890ի դէպքերը հետամտած եմ թղթակցութիւններովս փոքր ինչ անոր ծառայել: Սակայն Հայաստանէն ու արտասահմանէն ստացած բազմաթիւ տեղեկութիւններս հաստատած են Մարտիլլի հայ թերթին բարեբար ազդեցութիւնը: Եւրոպա անցնելու յետոյ նաև չեմ կրցած կանոնաւորապէս հետեւիլ Պ. Փորթուզալեանի բոլոր հրատարակութիւններուն. յաճախակի տեղափոխութիւններս արգելք եղած են փափաքիս: Բայց վերջի ժամանակներս օրուան կարգ մը ընթացիկ ինդիւստրիալ համար Արմէնիայի եւ մեր միջեւ համոզումի զգալի տարբերութիւն մը կ'երևար: Սակայն կենսական կարեւորութիւն ունեցող հարցերու, մասնաւորապէս Հայաստանի սպառնացող ծանրածանր վտանգ-

ներու համար, Պ. Փորթուգալեա նի հետ տեսակցութիւնս ներուս մէջ հիմնական կէտերու մասին գաղափարակից երևցանք:

Արևեկիս տկարացումը արտասահմանի Հայոց կեանքին եւ մտքին նոր պէտքերուն եւ նոր պահանջումներուն հետեանքն էր: Իր հիմնարկութեան թուականին Արևեկիս արտասահմանի միակ հայ թերթն էր, իր տեղեկութիւնս ները, լուրերը շատ կը նպաստէին իր տարածումին: Այժմ ուր որ բաւական թուով հայ գաղթական նութիւն մը կայ, հոն տեղական մէկ երկու հայերէն թերթ ալ կը հրատարակուին, որոնք զոհացում կուտան շուտափոյթ լուրեր ստանալու պէտքին: Մարտէլի թերթը բնականաբար ուշ տեղ կը հասնի, և իր տարած լուրերը թարմութեան հաճոյքը չեն կրնար ազգել միշտ:

Արևեկիս կատարեց նաև մեծ դեր մը որուն շարունակութիւնը այլ եւս անհրաժեշտ չէ: Ինչպէս վերև ըստի, Հայութիւնը ցնցեց, եւ հայ սրտերը, եթէ ոչ ամէնքը իրարու, գոնէ ամէնքը Հայաստանի հետ կապեց. ու հայկական խնդիրը որ մենէ մոռցուելով, եւրոպական շահերու անդունդին մէջ կրնար գորիւ, Արևեկիս հայկական խնդիրը հայացնելու մեծապէս նպաստեց: Հայ ազգին վերջին տարիներու զժաղգութիւններէն յետոյ ակններև տեսնուեցաւ թէ հայ ժողովուրդը հետզհետէ աւելի կը հակամտի իր միտքը լուսաբանել եւ զարգացնել քաղաքական, պատմական, իմաստասիրական, գրական ընդարձակ ուսումնասիրութեանց ընթերցումով եւ վերլուծումով: Հանգէսներն են միայն որոնք հապճեպ խմբագրուելէ ազատ ըլլալով, եւ միանգամայն լայն ծաւալ ու նենալով, կարող են խնամեալ ու բազմակողմանի պարունակութեամբ մը ծառայել հանրային մտքին զարգացմանը եւ լուսաւորումին: Ուրեմն Արևեկիս Գրաստայի մէջ չունենալով հայ ընթերցողներու բաւականաչափ թիւ մը, պարտաւոր էր իբր արտասահմանի ընդհանուր Հայոց թերթը հանգէսի վերածուիլ, որպէս զի կարենար հզօր մնալ: Սակայն հրատարակուող հանգէսի մը, որ շատ ծախքի կը կարօտի, երբ մուտքը արգելուած է հայաշատ երկիրներ, ինչպէս Թիւրքիա և Ռուսիա, բնականաբար Եւրոպայի եւ Ամերիկայի ընթերցողներուն թիւը սահմանափակ կը մնայ: Հանգէսի մը խմբագրութիւնը պարտաւոր է յանձնառու ըլլալ նիւթական զոհողութեանց զոր բազմութիւնը ընտանիքի մը հայրը անկարող է կրել: Արևեկիսի տկարացումը ստեղծուած այս կացութեան անխուսափելի հետեանքն էր:

\* \* \*

Արևեկիսի կամքի տէր խմբագրին գործօն գերը ազգին մէջ պիտի վերջանայ: Ո՛չ հաստատական, ո՛չ միտական պատասխան մը կրնամ տալ ապահովապէս: Միշտ բիրտ ուժն է որ այս կամ այն ասպարէզի

մէջ անոր գործունէութիւնը ջախջախած է: Օր մը Եւրոպայ կը բանտարկուի շղթայակապ, իբր խոզարար. բնական է որ այլ եւս հոն գործելու անկարող գտնուէր. ուրիշ օր մը Պոլիս Պատրիարքը Ասիան ջնջել կուտայ, ի՞նչ կրնար ընել խմբագիրը. Թիւրք իշխանութիւնը կեղծոնականին տնօրէնը կը հեռացնէր վանէն, կրնա՞ր բռնի հոն մնալ եւ առաջ տանիլ իր ձեռնարկը: Հիմակ ալ նիւթական կացութիւնն է որ կը ջլատէ զինքը:

Եւ սակայն հայ ազգը պէտք ունի Պ. Փորթուգալեանի ծառայութեանցը: Անձնաւորութիւն մըն է որուն համոզումներուն ուժգնութեանը, զգացումներուն ազնուութեանը միայն հաւատք ունի Հայաստանի երիտասարդութիւնը: Ներկայիս մէջ մեր երկրին էն տարաբաղդ մասը վասպուրականն է իր շրջականերովը, անոր ապագան է, և անոր հետ ամբողջ հայ աշխարհին ապագան է որ մեր բազմազարեան պատմութեան մէջ նմանը շտեմնուած վտանգի մը սպառնալիքին ներքև կը գտնուի: Երիտասարդութիւն մը կայ Հայրենիքէն գուրս, մասնաւորապէս վասպուրականցի, որ ահաբեկութեամբ կը դիտէ այդ ապագային մեր ձեցումը: Դիմագրուելու եւ յաղթելու զօրութիւնը չպակսիր իրեն, բայց թուի թէ գործունեայ մարտնչուծի մը քաջութիւնը չի զգար ինքն իր մէջ: Այդ երիտասարդութիւնը բոլորելով Պ. Փորթուգալեանին շուրջը կարող պիտի ըլլայ հզօր աշակից մը հանդիսանալ հայ հայրենիքին ներկան բարելուելու աշխատութեան: Այդ բարելուումն է որ Հայաստանը պիտի փրկէ զարձեալ նոր օտար լուծի մը ներքեւ ընկճուելով փճանալու իրական վտանգէն:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Լոնտոն, 29 օգոստոս 1900

Գեղեցիկի դառանակը:—Տոնմայիև ու համալսարդկայիև Գեղեցկոչքիւնները:—Հրկիզեալ աւելոչք ծաւոնե շոչքը:—Մրտիև ժառանգոչքիւնները:—Հայոնև ևոչ հաւաւոչք:

Գիշերը Աւահիտի նորագոյն թիւը կարգալով անգամ մը եւս Գեղագիտութեան դաւանանքին վրայ կը խորհէ: Ինչ է Գեղեցիկը, ո՞րն է Գեղեցիկը, կա՞յ Գեղեցիկի օրէնք մը: Առտուն երբ կ'արթննայի, այդ միկնոյն հարցումն, որ դեռ կը զեզերէին ուղեղիս մէջ: Աչքերնուս փակումէն առաջ ինչ որ եղած է վերջին մտածութիւննիս, զարթունմի բոպէին այն չէ՞ որ նախ կը ներկայանայ մեր մտքին:

Թեթեւ մառախուղը զեղնաշորթ նուրբ շղարշի մը պէս  
 Լոնտոնի վրայ նետուած էր. աշնան աւետաբեր: Պատու-  
 հանս բացի, եւ տրտմութեան պատկերովը հրճուեցայ:  
 Ու յիշողութիւնս երազուն թուա զէպի այն միւս երկին-  
 քը, Եզրպատական ձմրան երկինքը, որուն կապոյտը բեզի  
 կը պատմէ թէ Ֆելլահը ինչո՞ւ հազարաւոր տարիներէ ի  
 վեր թէկ թշուառ, բայց միշտ ալ զուարթ է և անհոգ: Այդ  
 կապոյտը երէկը կը մոռցնէ, ու միտքդ չը ձգեր վաղը: Եւ  
 սակայն կապոյտին պէս գորշն ալ սրտապարար է: Մէկը  
 վիշտը կ'անհետէ, սիւս վիշտը կը խտացնէ: Ո՞րն է գե-  
 ղեցիկը:

Ալ հիմա իրիկունները անզլիական դարաստանի մը  
 մէջ երբ կը քալենք շորցած, զեղնած տերևներուն վրայ,  
 անոնց խարշափունը լացի «Նշանաւ»ին պէս հոգին կը  
 սգաւորէ: Նուա՞գ հեշտալուր է սակայն զեղզեղանքէն զոր  
 հովը, մինչ ծառերը կը կանչնային, անոնց նորածիլ սա-  
 ղարթներուն մէջէն կը զաշնակէր: Կեանքի երգ, մահու  
 երգ, ո՞րն է քաղցրահնչակը սրտին համար:

Իմաստասէրներու դպրոց՝ մը կը ժխտէ մեր տեսած  
 աշխարհին իրականութիւնը. աչքի պատրանք կը դա-  
 ւանի՝ ամէն երևոյթ: Կարելի է: Կը սխալի՞նք եթէ Գեղեց-  
 կութիւնն ալ սրտի պատրանք համարինք: Ճշմարիտ  
 Գեղեցկութիւնը սրտին մէջ է թերևս. աղուորը՝ անոր  
 ցոլացումն է, քաղցրալուրը՝ անոր արձագանգն է: Վակ-  
 ներեան ո՞ր երաժշտութիւն կրնայ այնքան խոռովել հայուն  
 սիրտը որքան «Կոն'նկ, ուստի կուգաս, ծառայ եմ ձայ-  
 նիդ» հեծեծանքը:

Շատ չընէր, առտու սը Պոլսէն հեռագիր մը կարդացի,  
 ու զրադարանէն ցաւած սրտով զուրս ելայ, տխրութեամբ  
 համակեալ: Քարա-Կէօմրիկի մեր եկեղեցիին հրկիզման  
 գումն էր: Երբեմն ես ինծի կը հարցնեմ որ արդեօք այդ-  
 քան խորապէս պիտի ցաւէ՞ր եթէ փոխանակ Ոսկերեքանին  
 Այա-Սօֆիան այրած ըլլար:

Պոլսոյ խեղճուկ մէկ թաղը կորսուած այդ պզտիկ,  
 շէնքն անշշան, Եկեղեցին իր մէջը գեղեցիկ ի՞նչ ունէր որ  
 անոր կորուստը կրնայ աւելի զգալի ըլլալ հայուն քան թէ  
 ճարտարապետութեան հոյակապ մեծ յիշատակարանի մը  
 ջնջումը: Կարող չեմ գուշակել թէ հակառակը մտածող  
 Հայոց քանակը որքանի կը բարձրանայ, բայց կը զգամ թէ  
 սրտակիցներուս թիւը ստուար է:

Օր մը քարի կտոր մը ցոյց կուտան քեզի: Հատորի  
 մը զեղնած, մաշած բեկորն է. ակնարկ մը կուտաս եւ  
 աչքդ մէկդի կը դարձնես. փողոցները ասոնցմէ շատ: Եւ  
 ահա քեզի կ'ըսեն թէ այդ քարին կտորը Անիին աւե-  
 րակներէն բերուած է: Եւ դո՞ւն, հայ, յանկարծ կը  
 ցնցուիս ամբողջ Լուսնանդ մէջ. ոտքիդ մատուցներուն  
 ծայրերէն զխուզ մագերը սարսուռ մը կը վազվտէ, հո-  
 զիդ կը խոռովի, սիրտդ կը փզձկի, աչքերդ արցունքով  
 կը լեցուին, կարօտակէզ սիրով կը համբուրես քարին  
 կտորը, ու չես կշտանար: Եւ սակայն ըոպէ մը առաջ

զայն արհամարհած կիր. բառ մը հնչեցին ականջիդ, ու  
 ահա այդ անգեղեայ նիւթը հոգի առաւ, հոգիդ միացաւ,  
 եւ զեղեցկագոյն Գեղեցկութեան մը փայլովը կ'ըզմայլեցնէ  
 քեզի: Գո՞ւն քեզի հարցուր «Ինչո՞ւ»:

Գիտունները ընդունած են թէ բան մը չփճանար բնու-  
 թեան մէջ. ամէն ինչ կը տարբադարի, կ'ալլափոխի,  
 հիւլէները ձգողական զօրութեամբ իրար կը քաշեն, նոր  
 մարմիններ կ'ըստեղծուին: Չեն կորսուիր ուրեմն ար-  
 ցունքներն ալ, անմահ կը մնան սրբման արիւնի կաթիլ-  
 ներն ալ: Այդ քարին խեցին քու ցեղիդ մեծութիւնը տե-  
 սած է, անոր ցնծութեան արցունքները իր վրան ալ  
 թափուած են, քու թագաւորներուդ փառքին վիան է ե-  
 ղած, եւ հայուն ուրախութեան երգերուն ձայնի ալիք-  
 ները իր վրան ալ հանգչեր են: Օր մըն ալ այդ ժողո-  
 վուրդը տրտմութեան լացովը լացեր է, ու իր արցունք-  
 ները այդ քարին վրայ ալ ինկած են. քու ցեղդ ջարդուեր  
 է, եւ իր արիւնէն այդ քարին վրայ ալ ժայթքեր է: Բան  
 մը չփճանար բնութեան մէջ. արցունք, արիւն անոնք ալ  
 չեն անէացած. իրարու պլլուած կը հանգչին այդ քա-  
 րին մէջ: Քու ցեղիդ արիւնն է ատիկա. այդ արիւնովը զուն  
 հայ ես. առանց արիւնի ժառանգութեան չիկայցեղ: Ու չեն  
 ըսած թէ «արիւնը կը քաշէ, արիւնի ձայնը կը խօսի»: Հայ  
 ժողովուրդը կը հատալ թէ «սրտէ ի սիրտ ճամբայ կայ»:  
 Քարին կտորը, յիշատակներու սրբութեան մասնատուի,  
 ճամբան է ուրկէ սիրտդ կ'անցնի, կ'երթայ, կը միանայ  
 հայրերուդ սրտին: Սրտէ ի սիրտ տանող ճամբայ՝ ամէն  
 հայ աւերակ, սրտէ ի սիրտ տանող ճամբայ՝ ամէն հայ  
 ժամ սրտէ ի սիրտ տանող ճամբայ՝ ամէն հայրենի յի-  
 շատակ: Քանի՞ հայ Պոլս Այա-Սօֆիայի հոյակապ մըզ-  
 կիթէն, երբեմն տաճար, ներս մտած է: Աշխարհաքա-  
 ղաքացի Գեղեցկութիւն մը որ էն տգէտ Յոյնը կը յա-  
 փըշտակէ, անոր սիրտը կը խոռովէ, կ'ալեկոծէ, եթէ մըտ-  
 քին բան մըն ալ չըսէ իսկ, ոչ-յոյնին համար չափաբե-  
 րական Գեղեցկութիւն մըն է, զոր զգալու եւ սիրելու հա-  
 մար քիչ շատ զիտական եւ փիլիսոփայական ուսում պէտք  
 է ստացած ըլլալ: Շատ տարբադող է այդ Այա-Սօֆիան  
 ալ: Իր եղբայրները՝ վենետիկեան Սուրբ Մարկոսը եւ  
 Հրոմի Սուրբ Պետրոսը կը մնան բնակարանները այն Քր-  
 ըիստոսին որուն փառքին ու պաշտամունքին նուիրուած  
 են, Այա-Սօֆիան բոնի հաւատուրացման դատապարտ-  
 եալ գերին է: Իսլամութեան բերտ, վայրագ, յաղթական  
 ուժին կոթողը: Չեմ դիտեր թէ այդ տաճարը իր ալլակիւ-  
 նութեան մէջ այնքան տխուր խոհեր պիտի ներշնչէր որ-  
 քան հիմակ, եթէ այդ սուրբի մը բարեխօսութեան ներքեւ  
 գտնուած ըլլար: Սրբուհի Սօֆիան փափուկ աղջիկ մըն  
 է որ շատ զիւրութեամբ յաղթուեր է: Պատկերն է հտրէմ-  
 ները գերի տարուած քրիստոնեայ աղջիկներուն: Եւ սա-  
 կայն շէնքին վեհութիւնը կը գտնէ փափկութեան զգա-  
 ցունքները:

Հարիւրով, հազարով չէ որ Գարա-Կէօմրիկի ան-

չուք ժամը պաշտող, աւելի քան կէս դար հոն գացող  
Հայոց թիւը կը համարուի այլ բիւրնեբով: Ու ամէն հայ  
իր աչքէն կաթիլ մը արտասուեց յիշատակ թողած է  
հոն: Վաղը Ռոկեբերանը պիտի վերականգնեն, ապա  
հովազրեալ էր: Այդ նորուկ ժամը սակայն զիս իրեն  
պիտի չքաշէր եթէ Պօլիս ըլլայի: Սրբացած տաճարը չէ  
դեռ. սերունդներու տրտմութեան արցունքովը օծուած  
չէ տակաւին:

Եւ պիտի օծուի: Աստուածամօր պատկերը՝ ծախէն  
ու բոցէն վերամբարձ, ազատ մնացեր է. ու նորէն ի-  
րեն պիտի քաշէ վշտահարներու գունդերը, ինչպէս քա-  
շած է հազար տարիներէ ի վեր: Աւանդութիւնը տասը  
դարու կեանք մը կը վերագրէ հրաշագործ Չարխափա-  
նին: Ոչ ոք այդ թիւը ճշտած է. բայց հաւատացեալնե-  
րուն համար ժամանակը գոյութիւն չունի. երկուան  
նորութիւն թէ հազար տարուան հնութիւն մը, ի՞նչ  
փոյթ ժողովրդին համար. անիկայ գերբնական զօրու-  
թիւնը կը փնտռէ, զայն կը տեսնէ միայն Հրաշագործի  
մը էութեանը մէջ:

Ինչ որ ալ ըլլայ ժողովրդին հաւատքը, ընդունինք թէ  
Չարխափանը դարերու տեղութեան մէջ իրաւ հրաշա-  
գործ մը եղած է հայ ազգին համար, խափանելով օտա-  
րացման շարիքը: Հրաշագործ Աստուածամօր մը մին  
եղած է այն հզօր գաղափարներէն որոնք ցեղի մը ամէն  
մասերը, իր երկրին մէջ թէ իր երկրէն զուրս, ամրապինդ  
իրարու կը կապեն:

Հայաստանէն զուրս Բիւզանդիոնի լայնատարած շըր-  
ջակաները ընդարձակ տարածութեան մը վրայ սփռուած  
հայ զազթականութիւն մը իր աւանդութիւնները, իր յի-  
շատակները, իր լեզուն ամէնքն ալ օտարութեան մէջ օրէ  
օր մոռնալով տեսակ մը աշխարհաքաղաքացի ցեղ պիտի  
յօրինէր գուցէ, բայց ահա Արմաշ մը, ասպնջարան  
Չարխափանին, իրեն կը ձգէ հայ սրտերը: Ամէն հայ  
տուն որոշեալ օր մը իր ներկայացուցիչը զրկելով Ար-  
մաշ, հոն միևնոյն հաւատքով կը մկրտին ու կ'եղբայրա-  
նան իրարու անձանօթ տարագրեալ հայերը: Ու պզտիկ  
Արմաշ մըն ալ Պօլիս միութեան կեդրոն մը կը դառնայ,  
Հյա աշխարհին զանազան քաղաքներէն եկող Հայոց.  
Եւ այս կեդրոնը կ'երկարաձգի մինչեւ Արմաշ, մինչեւ  
Նիկոմիդիա, որ ցամաքէն հայրենիքի ճամբան է:

Հայը որ այդ հայրենի հողէն կը նետուի հելլենա-  
կան հողին վրայ, հոն պահ մը իր երկրին մէջ կ'ե-  
րազէ ինքզինքը: Անուշ օրօրը որ զինքը քնացուցած  
էր, մօրկանը աւաղուկ մեղեղին որուն կարկաչովը մեծ-  
ցած էր, յանկարծ իր հողին թունդ կը հանէ:

- Օրօր օրօր օրերուդ
- Թեւս զէմ բերեմ չարերուդ.
- Չարխափան չարերդ խափանէ
- Աստուածամօր արեգ պահէ:

Այսպէս երգած էր իր մայրը «օ, օրօցին նստեալ քո-  
վեր», ու հիմակ այդ յիշատակն է որ իր սիրտը կը  
լեցնէ, հողին տակնուվրայ կ'ընէ. կը վազէ Չարխա-  
փանին սրուն զիմագծերուն ներքե իր մօրը պատկերը  
կը տեսնէ, որուն բերնէն իրեն կը թուի հայրենիքին  
ձայնը լսել:

Անոնք որ հայրենիքէն վերջնապէս տարագիրներու  
մէջ չեն մեծցած, անոնք չեն կարող երևակայել կարօ-  
տակէզ յուզումը որ Հայաստանցիին սիրտը կը խոռովէ  
ի յուր Չարխափանի անունին:

Ես ալ դացած եմ պզտիկ Արմաշը Չարխափանին  
«ոտքը»: Չեմ գիտեր քանի տարուան էի, եօթ, ութ,  
ո՛չ աւելի: Օր մը Օրթագեղէն ճամբայ ելանք Գարա-  
կէօմրիկ երթալու: Հիմակուան պողոտաները, ճամ-  
բաները գոյութիւն չունէին: Այերակներէ, փշտակ-  
ներէ, առապարներէ պէտք էր անցնել: Աւելի քան  
վեց ժամ զրինք մինչեւ Գարա-կէօմրիկ: Իրիկնամտին  
հասանք: Մօտ քառասուն տարի անցած էր այց տեսա-  
րանը աչքերուս առջեւ է. եւ յիշատակը կը հանգչեցնէ  
միտքս հիմակ ալ: Խոր լուսութիւն կը տիրէր. քանի մը  
տղաք աղբիւրէն ջուր կը խմէին, հետաքրքիր մեյի նա-  
յելով: Ժամկոչ մը ընդատալ եկաւ. գաւթին զուրը  
բանալով մտցուց մեզի տաճարը, որ դեռ խունկին  
բուրումը կը պահէր. մոմերնիս վառեցինք պատկերնե-  
րուն առջեւ, ու երկիւղածութեամբ աղօթելէ յետոյ զուրս  
ելանք: Աղբիւրէն մենք ալ զովացանք: Տարին մեզի  
քարոզիչին քով, Փափագեան Յովհաննէս վարդապետ  
մը, հիւանդոտ աչքերով, խարտեալ մազերով: Խօսեցաւ  
ինծի հօրեղբօրս վրայ, որ խարտեղ իրեն ալ երկու  
ղիւրք տուած էր. «նայէ որ զուն ալ անոր պէս կարդա-  
ցող ըլլաս մեծնաս նէ» խրատեց: Յետոյ քաշուեցանք  
վերնատունը, ուր շատ թեթեւ սնունդ մը առինք, պահ-  
քի ուտելիք. եւ պատրաստուեցանք ուխտին:

Ետքէն շատ անգամ լսած եմ հրեշտակներու երգե-  
րովը երկնային հրճուանքներու պատմութիւններ. կը  
սիրեմ անոնց հաւտալ: Արքայութեան մէջ հրեշտակ-  
ներու երգն էր կարծես որ առտուն մեզի արթնցուց:  
Եկեղեցական արարողութիւնները սկսած էին. վեր ցատ-  
կեցինք: Տաճարը, լոյսերը, աղօթքները, Աստուծոյ  
ներկայութիւնը, այս ամէնը որ սովորական կեանքը  
կ'ընդհատէր, իրացնէ երկնային բնակարանի մը պատ-  
րանքը կուտար, պատրանք զոր տարիները չեն փա-  
րատած:

Վերագարձնիս ներէն ոտքով: Տաճանելի ուղեւորու-  
թիւն մը, լոր սակայն շատ թեթեւ կուգար, վասն զի  
հաւատքը իր թեւերուն օգնութիւնը կուտար: Գուցէ  
անօգուտ հոչակոյին այն բոլոր շարժարանները զոր  
հայն ժողովուրդը իր երկրին մէջ եւ երկրէն զուրս շա-  
րունակ ի նքնայօժար կը կրէ, Ռիտատեղիներ երթալու

համար: Այս կարծիքին համաձայն չեմ: Հայ ազգը իր զօրութիւնը եւ կեանքը շատ կը պարտի հաւատքին համար կրած շարչարանքներուն: Հաւատքի մը համար սիրայօժար տառապանքները հոգեկան մարզանքներ են, որոնք կը վարժեցնեն ժողովուրդը ի հարկին տուարձու բռնութեամբ զինքը խոշտանգող տառապանքներուն, եւ դիւրութեամբ անձնատուր չըլլալու: Զինուորը պատերազմի ամէն շարչարանքներուն արիաբար կը դիմադրէ, վասն զի խաղաղութեան օրերու մէջ զօրանոցի մը շարչարանքի կեանքին ընտելացած է, և ռազմափորձերը զինքը մարզած են: Հայը շատ դարեր ինքնաօժար պահեցողը, ծովերովը, տաճանակիր ուխտագրնտցութիւններովը իր զինուորական ծառայութիւնը կատարած է, տանջանքի վարժած է, ու երբ օրին մէկը իսլամը զինքը բանտը կը նետէ եւ սովամահ կը տանջէ, երբ հետիոտն բազմէ բազմ կը վարէ, երբ սուրբ անոր գլխուն վրայ կը շողացնէ, հայը ո՛չ կ'ահարեկի, ո՛չ անձնատուր կ'ըլլայ: Շատոնց է որ ինք Գաղափարի մը համար, որ Հաւատք կը կոչուի, շարչարուիլ, տառապիլ սորված է: Հայը արիւնին հետ կը ժառանգէ մարտիրոսացման զգացումը: Այդ ժառանգական զգացումն է սր մեր ցեղը կը շլապնդէ, եւ յոխորտաբար իր լամին դիմագրաւելու զօրութիւնը կը պարգևէ մեզի:

Տասնհինգ դար մեր երկնային ազատագրութեան համար տանջուելով տանջուելով, արիւննիս թափելով թափելով, երբ օր մըն ալ մեր երկրային ազատագրութեանը համար պահանջուեցաւ այդ արիւնը, արտակարգ շուարուումով մը շտկարացանք: Գաղափարի մը համար արիւն տալ մեզի ցեղային ունակութիւն եղած է: Մեր զօրութիւնը այդ ունակութեան մէջ է, վասն զի հինցած ունակութիւնը բնաւորութեան մաս կը կազմէ:

Երբ Նար-Պէյ խորէն եպիսկոպոսին, որ Բարիզէն վերադարձած էր, կը հարցնէինք,

—Սրբազան, վիկթոր Հիւկօ Արեւելի մասին իր ազատագրական ճանքերուն մէջ միշտ Ալպանիա, Պոսնիա, Հերզեկովին, Կրետէ կը գոչէ, առանց երբեք հայը միտքը բերելու: Այդ ժողովուրդները եւ ոչ իսկ Հիւկոյի մը գոյութիւնը կը կասկածին, մինչ Հայաստանի գեղերը անգամ ոչ միայն Հիւկոն լսած են այլ եւ թշուառները գոց գիտեն:

Սկեպտութեան ու զգայնութեան խառնուրդ ժայտով մը Նար-պէյ պատասխանեց,

—Դեռ կաթիլ մը արիւն չէք թափած ձեր ազատութեանը համար, կ'ըսէ Հիւկօ:

Օ՛հ, այդ արիւնը ետքէն ոչ թէ կաթիլ կաթիլ ինկաւ, այլ աղբերաբար հոսեցաւ, բայց Ֆրանսա Հիւկօ մը չ'ունէր որ ցնցեր Մարդկութիւնը:

Եթէ Եւրոպայի մէջ Հիւկոյի մը ձայնն ուժը կը պակսի մեզի, որիչ մեծագոյն ուժ մը սակայն մեր զօրավիճակն է:

Երբ Սպարտանցի կոտորածին զուժը հասաւ, յիշեցի լեռնական պառաւի մը խրոխտ յայտարարութիւնը իր գեղապետին.

—Մեղոն ախպեր, ըրզիբան մը ասիմ, աւելի աղէկ է որ մեր գեղի ամէն խորթեր (երիտասարդներ) ուսմէն հտրաններ մեռնին. միճակ (միեակ) մէկ կէնճ խորթ մը եւ մէկ արուս մը (հարս) ողջ մնան, բայց ազատ եղնին. էմլէ (նորէն) մէկ օր մեր գեղ կը շէննայ:

Հայ ցեղն է որ այդ վաթսուն տարեկան պառաւին բերնովը կը բարբառի: Երկրային ազատագրութիւնը հայուն նոր հաւատքն է: Ամէն նոր հաւատք մոլեռանդութիւն մըն է որ անդիմադրելի ուժգնութեամբ կը տարածի, կը սփռի, եւ արիւնով կը յաղթանակէ:

Հայաստանի հայուն հին Հաւատքը չի ջնջուիր, զի իտլամն ալ իր Հաւատքը կը պահէ. բայց մեր հին Հաւատքին վրայ էր պատուաստի Նորը: Այդ երկու Հաւատքները ապագային նոր Հայութիւնը կը պատրաստեն:

ՀՐԱԶԻԱՆ

ՍՊԱՂԱՆՔԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Ռիւթերի գործակալութիւնը Կ. Պոլսէն հետեւեալ հեռագիրները կը հաղորդէ Լոնտոնի մամուլին:

Վանի անգլիական Դեր-Հիւպատոս Մօսնէլ հազարապետը կը կարծէ թէ Սպարտանց ջարդուող Հայոց թիւը շատ չափազանցուած է, թէև ինք զեռ կարող չէ մանրամասնութիւններ հաղորդել:

Սպարտանցի կոտորածին կարգադրիչ Ալի փաշա օգոստոս 22ին Պիթլիսէն Երզնկեան գնաց:

Մեկնելուն նախորդ օրը կառավարական պաշտօնատան մէջ իր ներկայութեանը հրաւիրելով Պիթլիսի Հայոց եպիսկոպոսը եւ Վարչութեան անդամները, պահանջեց որ վաւերացնեն Սասունէն 20 ստորագրութեամբ ստացուած յայտարարութիւն մը, որուն նպատակն է հաւաստել թէ Սպարտանց կոտորածի մը մասին Ռիւթերի գործակալութեան տուած լուրերը անհիմն են. թէ՛ խաղաղութիւնը վրդովուած չէ Սասուն, եւ հանդարդութիւնը կը տիրէ շնորհիւ սուլթանին եւ «հայրախնամ հոգածութեան» Ալի փաշային:

Եպիսկոպոսը եւ ժողովականները կը պատասխանեն թէ, իրենք ո՛ր և է տեղեկութիւն չունին Սպարտանցի եղելութեան մասին, ուստի պէտք է որ նախ և առաջ տեղին վրայ քննութիւն մը կատարեն:

Ալի փաշայի և Հայոց ներկայացուցիչներուն տեսակցութիւնը կը կատարուէր Պիթլիզի կուսակալութեան

Մուսավինին միջոցաւ Ալի փաշա իսկզբան հաւանութիւն տուաւ տեղին վրայ քննութիւն մը կատարելու, բայց տասը ժամուան բանակցութենէ յետոյ մերժեց այդ առաջարկը և ժահուան սպանալիքով պահանջեց յայտարարութեան վաւերացումը: Հայոց ներկայացուցիչները պարսաւորուեցան տեղի տալ:

Վանի ռուսական Գեր-Հիւպատոսը օգոստոս 21ին Պիթլիզ հասնելով, հետեւալ օրը իսկ մեկնեց է անկէ ու Սպաղանք գացեր է: Պիթլիզի գինուորական նոր հրամանատար Սալիֆ փաշան ալ խուժք մը գինուորով անոր ետեւէն գացեր է. օր մը ետքն ալ Պիթլիզի վալին մեկնեց է ի Սպաղանք:

### ՍՈՒԼԹԱՆԻՆ ՅՈՒՄԵԼԵԱՆԸ

Թողունք իբր Հայ, բայց իբր մարդ իսկ կարելի չէ ցաւ մը չզգալ այն եղանակէն որով Եւրոպա կըմասնակցի սուլթանին յորեւեանին: Բոլոր պետութիւնները մասնաւոր պատուիրակութիւններ ղրկեցին Կ. Պոլիս շնորհաւորելու համար արինազանգ յորեւանը. եւ մամուլը ու հանրային կարծիքը անտարբեր հանդիսատես մնացին փառաւորմանը այդ 25 տարուան տիրապետութեան, որ ոճիրի և արեան անընդհատ յաջորդութիւն մը կը ներկայացնէ:

Յրանստիան մամուլին մէջ գայրոյթի ու բողոքի մէկ ազդակ մը միայն բարձրացաւ, Իւրպէն Կօիկի անարձագանգ ձայնը՝ Օսոտի մէջ: Թան, Էքօ տը Բարի և մէկ քանի ուրիշ թերթեր հազիւ մէկ քանի աննպաստ խօսքեր գտան այդ 25 տարուան տիրապետութեան համար: Անդին գերմանական մամուլը գովեստ չմնաց որ չկարգար սուլթանին գլխուն: Գերմանացիները իրենց գերին մէջ են ատով, եւ բնական էր որ այս պարագային այ իրենց Քայզերին բարեկամին շալլէին իրենց շահախնդիր հիացման հաւաստիքները:

Մեզի համար մեծագոյն կշիռը ունէր անշուշտ անգլիական մամուլին դատաստանը: Անկեղծ ըլլալու համար ըսենք թէ այդ դատաստանը սուլթանին դէմ այն գայրացկոտ ու ռիսերիմ պարսաւականը չէ զօր իրաւունք ունէինք իրմէ սպասելու: Անգլիական մամուլը անշուշտ մոռցած չէ—և ո՞վ կրնայ մոռնալ—այն արինոտ էջերը որոնք այդ տիրապետութեան գրեթէ ամէն օրը կը յատկանշեն: Բայց անոնց վրայէն գրեթէ թեթեակի կ'անցնի, համակրականի մօտեցող խօսքերով պատմելու համար ինչ որ սուլթանին 24 տարուան տիրապետութիւնը ըրած է Թիւրքիոյ մէջ:

Անգլիական մամուլին դատելու եղանակին վրայ գաղափար մը տալու համար, առաջ բերենք այստեղ տիրող կուսակցութեան էն հեղինակաւոր ու կշռաւոր թերթին, Սքանտաւրտի, յօդուածներուն մէկ ամփոփումը: Մէջտեղ բերուած իրողութեանց մեծագոյն մասը, որոնք իբր փաստեր կը ներկայացուին սուլթանին կատարած երկրաշէն գործերուն, գիտենք թէ ճշտիւ ի՞նչ կ'արժեն: Բայց մենք պիտի չյամենանք զանոնք մի առ մի մաղէ անցընելու և ցուցնելու թէ բացի մէկ քանի յառաջգիժութիւններէ, որոնք գրեթէ բոնի կատարուած են եւ ուրիշ բանի հետեւանք չեն բայց եթէ իրերուն բնական ընթացքին, Թիւրքիոյ վիճակը՝ այս սուլթանին օրով՝ ո և է բարեփոխում կրելէ հետի՝ հետզհետէ վատթարացած է, եւ այսօր չկայ երկիր մը կամուլին այնքան վէշ կուսովարուած որքան Թիւրքիան: Անօդուտ կը համարինք այդ աշխատութիւնը ընել այստեղ: Կարեւորը, մեզի համար, ուրիշներուն դատաստանը պիտնալն է, ու մանաւանդ Անգլիոյ վարիչ շրջանակներուն դատաստանը. ուստի, զայն կը ներկայացնենք այստեղ: Իսկ ազատական մամուլին տեսութիւնը կը պարզուի Տէյլի Նիւզի խմբագրականին մէջ:

\* \* \*

Սուլթան Ապտիւլ Համիտի թագաւորութիւնը, կ'ըսէ Սքանտաւրտի Կ. Պոլսոյ թղթակիցը երկար յօդուածի մը սկիզբը, օսմանեան՝ եթէ ոչ եւրոպական պատմութեան ամենէն կարեւոր եւ շահեկան էջերէն մին կրնայ կազմել: Իսլամական ախարհին գիտնալիք բանն է թէ այդ խալիֆայութեան համար պարծանք մը կարելի է նկատել այդ տիրապետութիւնը. բայց, ամբողջութիւնը աննելով, քաղաքակրթութիւնը եւ արդարութիւնը շահեցան այդ տիրապետութեան օրով, նոյն իսկ երբ՝ այնչափ յաճախ՝ արեան եւ ոճրի մէջէ կը քալէին:

Առաջին մեծ վտանգը զօր Ապտիւլ Համիտ դէմը գըտաւ գահը ելլելուն, ռուսական արշաւանքն էր, շատոնց մտածուած հարուած մը որ անխնայ կորովով եւ արագութեամբ կը տրուէր այնպիսի պահու մը որ Թիւրքիա բոլորովին անկարող կը կարծուէր գիմաղրելու: Թիւրքիա ի զօր գաշնակից կամ աջակից փնտոնց, եւ արշաւող բանակը մինչեւ Կ. Պոլսոյ դուռը հասած էր, երբոր Անգլիա մէջ մտաւ եւ Կ. Պոլիսը ազատեց,— ծառայութիւն մը որ ըստ երևոյթին շատոնց մոռցուած է: Բայց թէպէտ Թիւրքիա պարտուած եւ ոտնախիտ, իր բանակը ամօթով չմնաց այդ գործին մէջ, և պատերազմին գաղտնի պատմութիւնը ցոյց կուտայ թէ ռուսական լէգէոններուն բաղդը մէկէ աւելի անգամ նժարին մէջն էր, որ, էն տագնապալի վայրկեանին, Ռուսիոյ կողմը կը հակէր՝ տարրօրինապէս բարեբաստ դիպուածով մը: Պատերազմին հետեւանքը եղաւ Կարսի, Պատմուի, և Պուլկարիոյ կորուստը, եւ Պերլին մեծ պետութեանց տրուած խոստում մը՝ Նահանգ

ներուն վարչութիւնը բարեկարգելու, — խոստում որուն անգործագրութիւնը յաճախ սպառնաց եւրոպական պատերազմ մը առաջ բերելու: Յետոյ կիպրոսն էր որ Անգլիոյ թողութեան, պայմանաւ որ Անգլիա պաշտպանէ թիւրքիան Ասիոյ կողմէն ու է յարձակման դէմ, պայման որ կատարուի ունէր սակայն Անատոլիոյ նահանգներուն քրիստոնեայ բնակիչներուն վիճակին մէջ հարկ եղած բարեօրոյթները մտցնելու յանձնառութենէն: Քիչ ետքը ատոր յաջորդեց Եգիպտոսի գրաւումը Անգլիայէն, Արապի փաշայի ապստամբութեան պատճառաւ, որուն ծագումը հաւանութիւն բնաւ յայտնի պիտի չըլլայ: Բայց որ, եթէ Երլտըրի պաշտօնին մէջ չարքունեցաւ, գոնէ անոր հաւանութիւնը կը վայելէր, իբր կարելի պատուակ մը օսմանեան բանակ մը գրկելու հոն եւ սուլթանին ազդեցութիւնը վերականգնելու եւ Եգիպտոսի շափահանց արագ եւրոպականացման առաջը առնելու: Տարակոյս չկայ թէ էր ատեն մը ուր Օսմանեան խալիֆաները Եգիպտոսը կը նկատէին իբր վերջին ապստամբ մը երբոր իրենց եւրոպական կայսրութիւնը կործանէր:

Արեւելեան Բուսիոյ ապստամբութիւնը, որով Պուլկարիոյ միացաւ, նոր հարուած մը տուաւ Եւրոպայի մէջ թիւրքիոյ ունեցած դիրքին, եւ ցոյց տուաւ թէ պետութեանց գոնէ մեծ մասը նպաստաւոր էին քրիստոնեայ ժողովուրդներուն ազատագրութեանը եւ Պալքանեան Պետութեանց անկախութեանը, որոնք ամէնքն ալ ազատ էին հիմա եւ աստիճանաբար հզօր պատուար մը կը կազմէին Կ. Պոլսոյ շուրջը:

Տեսնելով որ պետութիւնները երթալով ալ աւելի արգելք կը յարուցանեն իր դէմը իր եւրոպական նահանգներուն մէջ, և յարաճուն տրամագրութիւն մը ցոյց կուտան Պերլինի Դաշնագրին տրամագրած բարենորոգմանց գործագրութեանը մասին պնդելու, Սուլթանը կարծես որոշում տուաւ իրեն գործերուն խառնուողներուն հետ շափուելու: Գլխաւորապէս հայկական իրաբանցումին պատճառաւ էր որ Պետութիւնները իրենց ուշադրութիւնը կը դարձնէին թիւրքիոյ վրայ, եւ պատճառը մէջտեղէն վերցնելով, թերեւ հետեւանքն ալ մէկտեղ վերնար: Յաճախ ըսուեցաւ թէ, հայկական ջարդերուն մէջ, սուլթանին ուզածէն աւելին եղաւ. բայց ոչ մէկ բան կ'արգարացնէ այս տեսութիւնը: Ընդհակառակը, ամբողջ Հայաստան աւեր աւերակ դարձաւ, և մինչեւ այսօր, հինգ տարիէ ի վեր, ոչ մէկ մարդ պատժուեցաւ: Ու դեռ ամիս մը չի կայ որ Սասուն նսրէն թատերաւայրը եղաւ ուրիշ փոքրիկ կոտորածի մը:

Աւելի առաջ երթալով, փոխանակ մէն սիւրիակ Անգլիոյ, Ռուսիոյ կամ ուրիշ պետութեան մը հետ գործ ունենալու, Սուլթանը յաջողեցաւ Եւրոպական Համաձայնութիւնը ստեղծելու, որու մասին զանազան կարծիքներ կը տիրեն: Սուլթանին կարծիքը սակայն սա է թէ

ատիկա իրեն միջոց կուտայ անվախճանօրէն երկարաձեռքելու իրեն դէմ ու է թշնամական գործ: Անտարակոյս ծայրագոյն շահագրգռութեամբ կը հետեւի հիմակայդ Համաձայնութեան ընթացքին՝ Չինաստանի մէջ, որպէս զի անոր համեմատ գծէ իր վարուելու կերպը:

Այն միջոցին երբ Պետութիւնները իրենց ուժը սպասած էին հայկական խնդրին շուրջը, Յունաստան՝ անտարակոյս Ռուսիոյ գիտութեամբը՝ նոր ական մը պայթեցուց թիւրքիոյ տակը՝ արշաւող բանակ մը գրկելով կրեմէ: Հետեւանքը եղաւ նոր նահանգի մը կորուստը: Այս գործին մէջ, սուլթանը չէր թերեւ որ անարժան գեր մը կատարեց. ինք պարզապէս գերազանց ուժին առջեւ տեղի տուաւ, կրթնելով խոստումներու որոնք չպահուեցան: Կրեմէի մէջ իրենց ունեցած յաջողութիւնը այնչափ փրօցուց Յոյները որ անխորհրդարար պատերազմ հրատարակեցին սուլթանին դէմ, բացէ ի բաց կարծիք եւ յոյս յայտնելով թէ Պալքանեան պետութեանց մէկ երկուքը իրենց պիտի միանան: Այս մասին սակայն մեծապէս յուսախաբ եղան. սուլթանը ջախջախի բանակ մը գրկեց սահմանազրուխներուն երկայնքը, եւ շատացաւ Բէտիֆները միայն հանելով թշնամիին դէմ: Իրօք, կարելի է ըսել թէ ալ ձեռքը կոնակը դրած կուուեցաւ եւ յաղթեց: Վերջին պահուն, երբոր Աթէնքի ճամբան բաց էր օսմանեան բանակին առջեւ, Չարը միջամտեց եւ ազատեց հելենական մայրաքաղաքը, ինչպէս Անգլիա Կ. Պոլսը փրկած էր, եւ Ռուսիա ու Սատրիա՝ Պելկրատը:

Պատերազմը սակայն կեանքի և ազդեցութեան նոր պայմանաժամ մը տուաւ թիւրքիոյ, եւ Եւրոպա զարմացաւ տեսնելով սուլթանները և մթերքը կայսրութեան մը որ ամէն բանէ զուրկ և ապիկար կը կարծուէր: Արագ զօրահաւաքումը եւ փոխադրութիւնը, եւ պատերազմի դաշտին վրայ զօրքերուն շատ լաւ ընթացքը յոյժնպաստաւոր ապաւորութիւն մը առաջ բերին Արեւմուտք, որ աչքը բացաւ և հասկցաւ թէ թիւրքիա տակաւին ոյժ մըն է զօր լրջօրէն հաշուի առնելու է: Ոչ ոք այնչափ շուտ ըմբռնեց թիւրքերուն կարելի արժէքը իբր դաշնակից որքան Գերմանիա, և սուլթանը պէտք եղածին շափ վարպետ բրգաւ խորտակելու համար այն դրութիւնը որով ամբողջ Եւրոպա իրմէ երես կը դարձնէր: Հետեւաբար, երբոր Վիլհելմ Բ փափաք յայտնեց Կ. Պոլսի գալու, ոչ մէկ ջանք խնայուեցաւ՝ այդ առիթը անկիւնաքարը դարձնելու համար այն իրապէս սիրալիւր յարաբերութեանց որոնք անկից ի վեր հաստատուած են երկու վեհագետներուն միջեւ:

Ապագայ սլատմագիրը, երբոր Ապտիլ-Համիտի տիրապետութեան մասին իր դատաստանը յայտնէ, կրնայ, կարսի, Պաթումի, Պուլկարիոյ, կիպրոսի, Եգիպտոսի և կրեմէի կորուստին զիմաց նժարին միւս կողմը դնել այն կատարեալ ռազմագիտութիւնը որով ան կարող եղաւ տա-

րիներով գրուեալ ելլել ամբողջ երոպական դիւանագիտութեան հետ, մէկ պետութիւնը միւս պետութեան դէմ հանելով, մինչեւ որ, յուսահատ, համաձայնութիւն մը կազմեցին որուն հետ աւելի զիրին եղաւ խաղալ և գործել քան թէ իր սոսկական անդամներուն հետ, և վերջի վերջոյ, մէկ քանի արտօնութիւններով եւ նուէրներով, ապահովեց Եւրոպայի վեհապետներէն ամէնէն անկախին բարեկամութիւնը եւ աջակցութիւնը, — բարեկամութիւն մը որ օր մը անհաշուելի օգուտ պիտի կրնայ բերել:

Նիւթապէս եւ ընկերապէս, թիւրքիս շատ բանի մէջ մեծ յառաջգիծութիւն բրած է վերջին ՉՏ տարուան մէջ: Անշուշտ կարելի չէ թիւրք մասուլիսն պէս մանրամասն ցանկ մը տալ հանրային ամէն բարեօրոյններուն, բայց կը բաւէ ամէնէն աչքի զարնող օրինակները ներկայացնել այստեղ: Բանակին մէջ, զօրահաւաքի եւ փոխադրութեան ամբողջ կրօնութիւնը վերականգնուած է, զիստօրապէս դերման առաջնորդներու եւ Ֆին Տէր Կոյց փաշայի հսկողութեամբ տակ: Թիւրք սպաններ խուժա խուժա արտասահման կը զրկուին մարզուելու համար, եւ զօրքերուն մէկ շատ մեծ մասը վերստին ուղարկուած է Մազէրի հըրացաններով: Թնդանօդարանը մասամբ վերականգնուած է նոր հրետանի եւ պզտիկ զէնքեր արտադրելու համար, և անձուխ վառօրի գործարաններ շինուելու վրայ են: Համիտիէ հեծելազօրքը կազմուած է, և ահագին թուով ձի գնուած է Ասարիայէն եւ Ռուսիայէն: Գալով նաւարանին, վերջին տարիներս է միայն որ կորովի ջանք մը կայ հինին բեկորներէն նոր նաւատորմ մը ստեղծելու: Հին զրահաւորներուն ամէնէն յարմարներէն ինը տասը ֆիլի և Ճենովայի նաւարանները զրկուած են, չորս նոր թորփիլանաւ ապօպրուած են, և այդ ամէնը 18 ամիսէն պատրաստ պիտի ըլլան՝ վերջին կատարելագործութեանց համաձայն սպասարկուած: Ելմտական անսակէտով, երբուն պարտքը միացուած է, և չորս Սէրիներուն մէկ մեծ մասը հատուցուած է Օսմ. Հանրային Պարտքին վարչութեան կողմէն: Այս վարչութեան հետ մէկտեղ, Միսխոտի Ռէմիս և Թէմպէքի մենաշնորհը հաստատուած են: Ռուսիոյ պատերազմական տուգանքին յետնորդները վճարուած են, ու թէպէտ պետութեան գանձը սովորաբար պարապ է, պէտք եղած առեւնը միշտ ստակ կը գտնուի: Յունաստանի պատերազմական տուգանքին չորս միլիոն ոսկիին մեծ մասը դեռ պահուած կը մնայ՝ զինուորական պատահականութեանց համար:

Երկաթուղիներու, քարափներու եւ նաւահանգիստներուն յաւելումը յոյժ նշանակելի է: Կ. Պոլսոյ քարափները պատիւ կը բերեն գանձը շինող ֆրանսական ընկերութեան, և մեծ բարիք մըն են նաւարկութեան համար: Քարափներ շինուած են Պէրուլթ և Սելանիկ, ու նոր մը շինուելու վրայ է Հայտարարութեան, Անատոլիոյ երկաթուղիին շուկէտը: Այս ձեռնարկը նոր քաղ մըն է գէպի ամբողջ կեդրոնական Փոքր-Ասիոյ բա-

ցումը: Ընկերութիւնը հիմակ արտօնութիւն ստացած է իր գիծը երկարելու մինչեւ Պարսից Մոցը, և հետզհետէ անհուն բարիք մը պիտի դառնայ երկրին համար: Իզմիր Գասապայի գիծը եւ ճիւղերը. Սէլանիկ-Մանասթըրի, Իսկիւլ-Չիպլիքի, Մուսանիա-Պրուսայի, Պէրուլթ-Գալատիոսի, Եաֆա-Երուսաղէմի գիծերը այս ՉՏ տարուան մէջ շինուած են:

Ամէն կարգի գարոցներ հիմնուած են ամբողջ կայսրութեան մէջ, երկու սեպերուն համար նախնական եւ երկրորդական վարժարաններ՝ բոլոր զլիստուր քաղաքներուն եւ մեծ գիւղերուն մէջ, եւ հսկայական բժշկական վարժարան մը եւ իրաւաբանական ու առևտրական վարժարաններ շինուելու վրայ են Կ. Պոլիս: Անհամար մը կիթներ եւ աղբիւրներ բացուած են, ու թուղթի վրայ ալ շատ մը բարեօրոյններ ձրագրուած են՝ ոտականութեան մտտին:

Պէտք չէ մոռնալ ալ գային ուրիշ մեծ յառաջգիծութիւն մը արգի սուլթանին օրով, — թիւրք կնոջ շատ դանդաղ բայց այսուհանգերէ շատ նշանակելի ազատագրութիւնը: Բարձրագոյն շրջանակներուն մէջ բազմակնութիւնը եթէ ոչ անհետանալու վրայ է, զոնէ աղէկ աչքով չնայուի, և շատ աւելի մեծ ուշադրութիւն կը դարձուի աղջկանց դաստիարակութեան, որոնք թէ ընտանիքներու եւ թէ հանրային վարժարաններու մէջ այնքան հոգածութեան առարկայ են որքան իրենց եղբայրները: Թիւրքիոյ ամէնէն զեղարուեստական և խնամուած թերթը թիւրք կիթներու կողմէ կը հրատարակուի ու կը խմբագրուի, և ժողովրդական դրականութեան մէջ ամէնէն ծանօթ անուններէն մէկ քանին կին-գրողներու անուններ են:»



Սրանտարտի վիճանայի թղթակիցն ալ յօդուած մը ունի սուլթանին յոբելանին նուիրուած, որուն մէջ կ'ըսէ,

«Եթէ կարելի ըլլար պատմութեանէն կամ արգի սերունդին յիշողութեանէն շնջել հայկական ջարդերը, զոր համօրէն աշխարհք կ'ընդունի իբր արգի սուլթանէն ուղղակի կատարուած, գրեթէ ամէն մարդ պիտի միաբանէր շնորհաւորելու համար սուլթանին յոբելանը, որովհետեւ, իր տեսակէտին մէջ, եւ զինքը նկատելով իբր արեւելեան վեհապետ մը, Ապտիւլ Համիտ նշանաւոր մարդ մըն է: Իր տիրապետութեան — որ յոյժ փոթորկալի օրերու մէջ սկսաւ — միջոցին կատարուած գործը կրնայ բաղդատութեան մտնել իր նախորդներուն ամէնէն հուշակաւորներուն կատարած գործին հետ: Ոչ միայն թիւրք բանակը վերականգնեց այնպիսի կերպով մը որ յաղթեց Յունաստանի, ու մինչեւ այսօր սասանած կը պահէ Մակեդոնիոյ և Պալքանեան անկախ պետութեանց խուժարար տարբերը, այլ եւ կրթութիւնը հաստատեց թիւրքիոյ մէջ,

արդի իմաստով, սկսելով նախնական վարժարաններէն, որոնց թիւը կ'ըսուի թէ 35,000ի կը հասնի, մինչեւ երկրորդական, արհեստագիտական, աղջկանց վարժարանները, եւ Համալսարանը որ յօբելեանին յիշատակարանը պիտի ըլլայ: Նոյնպէս բարեգործական հաստատութիւններ հիմնեց ժողովրդին համար, այնչափ բազմատեսակ և այնչափ հանրօգուտ որ կարելի չէ ուրանալ թէ հեռու չէր բարենորոգման արդի գաղափարներէն որոնց բոլորովին օտար էին իր նախորդները: Չնչեց մեծ մասը այն բարբարոս սովորութեանց որոնք թիւրքիոյ արքունիքին մէջ տակաւին կը տիրէին երբոր իր մեծ եղբայրը, տարաբաղդ Մուրատը, սուլթան հոչակուեցաւ և կայսրութեան աւագանիին պատգամաւորութիւնը ընդունեց սա բացազանչութեամբ. «Ինչ ոճիւր գործեցի որ իս սպաննելու կուգաք:» Երբ Ապտիւլ Համիտ գահը ելաւ, պալատին մէջ ոչ զոք մորթել տուաւ, ինչպէս աւանդութիւն էր, և հանգուցեալ Ապտիւլ Ազիզի զաւակներէն մին իր հօրեղբօրը սիրականն է: Սուլթանը միանգամայն թիւրք կնոջ ընկերական զիրքը բարձրացուց: Եթէ, մէկդի թողլով իր աստիճանը եւ զիրքը, զինքը իբր պարզ մարդ մը նկատենք, շատերու համակրանքը կրնայ գրաւել, մասնաւորապէս Անգլիացիներունը, սրովհետեւ խորապէս կը սիրէ ձիերը և շուները, մեծ ախորժ կը զգայ բնական գեղեցկութիւններէ, և ընտանեկան կեանք մը կը վարէ իր զաւակներուն նուիրուած, որոնց հետ թերեւ ալ աւելի ժամանակ կ'անցընէ քան թիւրքիոյ ո՛ր և է նախորդ սուլթան անցուցած է իր շառաւիղներուն հետ: Իբր վեհապետ, սուլթանը կրնայ բաղդատուիլ Ֆրանց Եոսէֆ կայսեր, անոր պէս օրուան մեծագոյն մասը յատկացնելով երկրին գործերուն, անոր պէս կ'անուխ ելլելով, եւ խղճամիտ ուշադրութիւն մը նուիրելով ամէն կարգի մանրամասնութեանց:

Իր կեանքին կողմնակալ դատաւորները անգամ չեն կրնար ուրանալ թէ Ապտիւլ Համիտ շատ լաւ քաղաքագէտ մըն է, իր նախորդներէն շատերէն աւելի լաւ: Յաջողեցաւ մտերիմ յարաբերութիւններ հաստատել Գերմանիոյ կայսեր հետ, և լաւ յարաբերութիւններ Չարին հետ. պալքանեան վեհապետները իրարու ետեւէ Կ. Պոլիս գացին, և իւրաքանչիւրը կ'աշխատի սուլթանին բարեկամութիւնը վայելելու, և այս ամէնը՝ այդ պալքանեան իշխանապետութեան թիւրք լուծէն ազատելէն հազիւ տասներկու տարի ետքը: Իր խորհրդակիցներուն եւ պաշտօնատարներուն ընտրութեանը մէջ միայն արդի սուլթանը չափազանց անբաղդ եղաւ, որովհետեւ ինքզինքը շրջապատեց ապականեալ ու չարամիտ անձերու վոհմակով մը, զորոնք ցեխէն բարձրացուց զերագոյն աստիճաններու, միևնոյն ատեն անտեսելով մշակուած, ճարտար եւ փորձառու մարդիկը որոնք զեռ կ'ապրին իր երկրին մէջ, կամ պիտի ապրէին՝ եթէ միջավայրը իրենց աւելի նպաստաւոր ըլլար. ու այս ամէնը՝ մասնաւորապէս իր անձին և գա-

հուն ապահովութեան վախին ազդեցութեանը տակ, վախ որ կերպով մը կ'արդարանայ եթէ մտածենք որ սուլթան Մուրատ ողջ է տակաւին: Այդ վախին շնորհիւ, զոր Երլարզի բաղդախնդիրները կը շահագործեն, այդ վեհապետը կարող եղած է սուլթանին եւ թիւրքիոյ տիրել, մինչդեռ պարկեշտ ու կարող անձերէն շատը արքայը կը զրկուին կամ անգործութեան կը գատապարտուին թիւրքիոյ վերանորոգչին կողմէ, ինչպէս կ'անուանեն զինքը իր շողոքորթները:

Կարծեմ արդար եղայ Ապտիւլ Համիտի համար, չը ծածկելով իր ո՛չ լաւ ո՛չ դէպ կողմերը, և նախամեծար կը համարիմ խօսիլ իր տիրապետութեան միջոցին ուրիշներուն գործած սխալներուն վրայ — ամէնէն առաջ անգլիական զիւանագիտութեան գործած սխալներուն վրայ: Հայկական ջարդերուն անգլիական հասարակութեան մտքին վրայ առաջ բերած տպաւորութենէն ի վեր, անգլիական զիւանագիտութիւնը սխալներ գործեց ուսկից ուրիշ երկիրներ, ինչպէս Գերմանիա և Ռուսիա, փութացին օգտուելու, և կատարեալ յաջողութեամբ: Սուլթանը, թէպէտ իր հօրեղբօրը Ապտիւլ Ազիզի հետ Եւրոպա պտըտեցաւ երբ տակաւին Լէֆէստի էր, ու թէպէտ արդի գաղափարներէն եւ արդի գիտութիւն մէկ քանին ընդունած էր, այսուհանդերձ արեւելեան վեհապետ մը մնաց, վեհապետի մը արեւելեան բոլոր գաղափարներովը թրծուած: Անգլիացիները անտես ըրին այս կարևոր իրողութիւնը: Սուլթանին մտածելու եղանակովը, Հայերը ապստամբներ էին իր գահուն դէմ, օտար զբոսորդներու առաջնորդութեան ներքէ, և ինքզինքը կատարելապէս արդարացի նկատեց՝ այնչափ բարոյական սրշափ քաղաքական տեսակետով՝ զանոնք պատժելու երեք օրուան կոտորածի հրամանով մը, որով անոնց թիւը, եւ հետեւաբար անոնց մէկ գալիք վտանգը պիտի նուազեր:

Հայկական ջարդերէն յետոյ, սուլթանին քննադատները իրենք իրենց զուրցելու էին. «Սուլթանը բարբարոս մըն է վերջապէս, եւ պէտք է բարբարոսներուն օրէնքովը դատուի. եւ որովհետեւ մենք պատրաստ չենք զինքը գահընկէց ընելու և թիւրքիան եւրոպական գաղափարներու համաձայն կառավարելու, լաւագոյն օգուտը քաղենք առիթէն և այդ օրինակ ոճիրներու առաջըր անոնք զոնէ ապագային:» Ռուսիա և Գերմանիա այդպէս ըրին, ու մօծապէս շահեցան, մինչդեռ Անգլիա իր քաղաքական ինչպէս և առևտրական ազդեցութիւնը կորստնցուց, առանց միւս կողմէն ոչ մէկ Հայ ազատելու: Լաւագոյն էր սուլթանը ձեռքի տակ ունենալ և հետը գործել, քան թէ բնաւ սուլթան մը չունենալ հետը գործելու համար: Ու այստեղ յիշեմ Ապտիւլ Համիտի կեանքէն զէպք մը, զոր, եթէ յիշողութիւնս զիս չի խաբեր, Միլլեան Խան, պարսկական քաջածանօթ զեսպանը, ինծի պատմեց իբր տասներկու տարի առաջ: Ռուսերը ար-

դէն Սան-Սթեֆանօ էին, Կ. Պոլսոյ դրան առջեւ, եւ, Անգլիոյ ու Աւստրիոյ սպանալիքին անսալով, մայրաքաղաքը մտնելու ո՛ր է գիտաւորութիւն մէկդի թողած էին, երբոր զայրացմամբ իմացան թէ սուլթանը կ'ուզէր յաջորդ գիշերը իր բոլոր գանձերովը Պրուսա փախչիլ շոգնաւով մը որ պատրաստ կը սպասէր գաղտնի տեղ մը: Ատկից աւելի գէշ բան մը չէր կրնար պատահիլ ռուս յաղթականին: Ուստի Մելքոն խանի ամէն բան խոստացուեցաւ եթէ կարենար սուլթանը համոզել որ տեղը մնայ: Մելքոն խան գնաց Ապտիւլ Համիտը գտաւ Երլտըզի պալատը, անոր ապացուցուց թէ Ռուսերը որոշած էին Կ. Պոլիս չմտնել. և, ըստ որում սուլթանը տեղը մնաց, իկնաթիւֆ կրցաւ Սան-Սթեֆանօյի դաշնագիրը կնքել: Սուլթանը թերեւս այս դէպքը յիշէ իր գահակալութեան հանդէսներուն միջոցին: »



Խմբագրական յօդուածի մը մէջ, որ աւելի կշիռ եւ հեղինակութիւն ունի, Սրահտարտ գրեթէ համիմաստ դատաստան մը կ'ընէ սուլթանին 24 տարուան տիրապետութեան վրայ: Հակառակ ամէն գծուարութեանց, Ապտիւլ Համիտ կրցաւ զիմանալ մինչեւ այսօր եւ երկիրը ապասել կործանուէն որուն եզրին սօտեցած էր քանի քանի անգամ: Պէտք չէ մոռնալ ահագին դժուարութիւնները որոնց մէջ գահը ելաւ ան: Պատերազմէն յետոյ, թերեւ կարենար իր երկիրն բարեկարգութիւնը ապահովել՝ ջրհատոններուն ազատութիւնը և կեանքը երաշխաւորելով և երկիրն ապականեալ վարչութիւնը մաքրելով, բայց չէր կրնար իր մահմետական հպատակներուն նախապաշարմանցը յաղթել, քանի որ ըմբռնած էր թէ անոնք միշտ հաւատարիմ պիտի մնային իր գահուն, որչափ ասան որ եւրոպական պետութիւնները հակառակ ըլլային՝ երկիրն վարչութեանը:

Ըուստօրեալ մահմետականներ կան որոնք սուլթանին կառավարական զրութիւնը ամօթ մը եւ նախատինք մը կը համարին Մարգարէին պատուէրներուն: Բայց սուլթանը կրնայ անոնց պատասխանել թէ, հակառակ ամէն բանի, կրցաւ երկիրը կանգուն պահել միշտ: Անշուշտ, ստիպուեցաւ շատ երկիրներ եւ նահանգներ ձեռքէ հանելով, բայց, Հայաստանի մէջ, յաղթանակը իրեն մնաց: Յոբելիանի նախորդ օրն իսկ, նոր կոտորած մը տեղի կ'ունենայ Սասուն: Դեսպանները նորէն ու նորէն իրեն աղբար որեցիլ թէ, եթէ իր քաղաքական գոյութիւնը ապահովել կ'ուզէ, պէտք է վերջ տայ ջրհատոններուն հարձակումներին: Ան, ճանտարբեր ու անզգած, առջ կը տանի իր պատակական քաղաքակալութիւնը: Եւրոպա, ծայր սպիտակ գրգռած Չինաստանի մէջ, գրեթէ երախտապարտ կը մնայ Դաշնակիցները՝ կուսակալի մը յանդիմանութիւն կը զրկէ:

Խմբագրական յօդուածը կ'աւարտի օս խօսքերով.  
 «Մենք քօղարկել չենք ուզեր սուլթանին վարչութեան ծանր յանցանքները, ոչ ալ նուազեցնել իր իշխանութեան ներքեւ կատարուած ոճիրները: Բայց, եթէ ողջամիտ Անգլիացիները չեն կրնար ընկերանալ այն գովասանքներուն զորոնք Ապտիւլ Համիտ պիտի ստանայ իր յոբելիանին առթիւ, նոյնպէս ալ պիտի ետ կենան ուժ տալէ այն ծայրայեղ պարսաւանքին որուն ենթակայ եղած է ան: Ի նկատ պիտի առնեն այն հանգամանքները որոնց մէջ իշխանութեան զուխը անցաւ ան, եւ այն դժուարութիւնները որոնց ներքեւ ի գործ դրաւ այդ իշխանութիւնը: »



Իսկ Տէյի Նիւզի Խմբագրականը հետեւեալն է:  
 Չորս տարի առաջ պետութեանց զեսպանները իրենց կարծիքը յայտնեցին թէ սուլթան Ապտիւլ - Համիտ անձնապէս պատասխանատու էր ահռելի ջարդերուն որոնցմով թիչ առաջ իր հայ հպատակներէն հազարաւորներ սպանուած էին Կ. Պոլսոյ փողոցներուն մէջ: Այդ սարսփելի ամբաստանութեան հակառակը չապացուցուեցաւ երբեք, և բնաւ ալ պիտի չապացուցուի: Մայրաքաղաքին ջարդը կը յաջորդէր Փոքր-Ասիոյ մէջ կոտորածներու երկար շարքի մը: Դեսպաններուն ամբաստանութիւնը՝ Պ. Կլատտոնի «Մեծ Մարդասպան» խօսքին ընդլայնումն էր: Եթէ Կլատտոն ողջ ըլլար հիմա, պիտի գոչէր. «Ո՞վ Յոբելիանի խօսք կ'ընէ:» Նոյն այն տէրութիւնները (կամ անոնց մեծ մասը) որ սուլթանը կ'ամբաստանէին իբր ջարդին թելադրիչը, հիմակ իրենց զեսպաններուն կամ յատուկ պատուիրակութեանց միջոցաւ կը պատրաստուին անոր միանալ՝ իր «յոբելիանը» տօնելու համար: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհին մէջ, սուլթանին անունը ատելութեան առարկայ էր չորս տարի առաջ: Քրիստոնեայ ազգերուն յիշողութիւնը ա՛յնչափ տկար է կամ իրենց խղճմտանքը այնքան լայն որ կարենան անկեղծօրէն խնդակցիլ իր 24 տարուան տիրապետութեան համար: Նոյն հետայն կ'ընդունինք թէ տեղին վրայ գտնուող զեսպաններուն համար դժուար պիտի ըլլար եւ կենալ ուղորակական քաղաքավարութեան շնորհաւորութիւնները ներկայացնել նորին կայսերական վեհափառութեան: Բայց ապահովաբար, եթէ Լէմոտ խըմբուած Միջերկրականի անշլիական նաւատորմը ըուսազարդուի, ատիկա չափէն անցնիլ պիտի ըլլայ: Լէմոտի մէջ ըուսավառութիւն մը այնչափ խոշոր մեծաբանք մը պիտի ըլլայ որչափ Վոսփորի մէջ ըուսավառութիւն մը: Յաւալի է որ 38 անգլիական մարտանաւերը իրենց հանգիստի ժամերը չեն կրնար աւելի արժանի բաներու գործածել: Պուկարիա ալ իր մասնաւոր պատուիրակութիւնը փութացնելու վրայ է: Ինչու Պուկարիան:

Մոգջած է իր արեան մկրտութիւնը: Գերմանիա յատուկ պատուիրակներ կը զրկէ: Բայց անոնք որ Վիլհելմ կայսրը տեսան կամ կը մտաբերեն Սիոն լեռան վրայ բարձրացած ատեն, կրնան հասկնալ այդ պատուիրակութեան ջաղաքականութիւնը: Գերմանիա անտարական մեծ շահեր ունի Փոքր-Ասիոյ մէջ: Գերմանիա երկաթուղիներու կամ օդիչ արտօնութիւններու պէտք ունի Փոքր-Ասիոյ մէջ, իր ոտքին կուսան գտած է Պողոստին: Ու օր մը թերեւս — և այս օրը շատ հեռու չէ — կրնայ գերակշիռ Պետութիւնը բլլալ այդ երկրին մէջ որ ատեն մը Հոսմական Կայսրութեան ամէնէն գեղեցիկ եւ ամէնէն ճոխ նահանգները կը կազմէին: Եզդիպոսոսի Խաթիվ երիտասարդ Ապպաս Բ, հաճութեամբ կ'ըսենք, պիտի չմասնակցի իր գերիշխան վեհապետին տօնին: Ամբիկայի անունը չկայ ինչպէս զոգ պետութեանց ցանկին մէջ, և կը հաւատանք որ պիտի չըլլայ: Յօրեւեանին մէկ արհաճելի եւ յատկանշանական միջադէպը սա իրողութիւնն է որ սուլթանը իր արտաքին գործերու նախարարին՝ Թէվֆիգ փաշայի միջոցաւ գեսպաններուն իմացոյց թէ ուրախ պիտի ըլլար եթէ պատուիրակութիւններ զրկուէին, Եթէ այդպէս անպատկառ չըլլար, սպասելու էր որ սոաշարէութիւնը զիմացի կողմէն գար: Մանաւանդ որ Յօրեւեանը մահմետական սովորութիւն մը չէ: Սուլթանին քանակներէն գամեակը՝ Վիզգորիա թագուհիին ազամանդեայ յորեւեանին մէկ լիբը կապիւթիւնն է, և նորին կայսերական վեհապետութեան համար՝ ինքզինքը զրուատել տալու և պանծացնելու տարօրինակ հրնարք մը:»

ԼՈՒՐԵՐ

**Պ. ԱԼԻՔՍԱՆ ԱՐՁՈՒԵԱՆԻ Պոլիս** ձերբակալուելու կը հետագրուի Եւրոպական մամուլին: **ՊՈԼԻՍ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ.** Հայոց դիմ հարածանքը տարօրինակ խստութեամբ վերսկսած է Պոլիս, գլխաւորապէս քիչքը ոստիկանութեան հետքերէն զատմանու: Այսպէս ոստիկանական նախարարը տարբարակ հաստացոյցեր է քէ գահակալութեան յորեւեանին օրը հայերը Պոլիս մեծ ցոյց մը պիտի ընեն, բայց անգլիական ծովակալի մը այդ օրը Պոլիս ներկայութիւնը, եւ Լեմնու կղզիին առջեւ անգլիական նաւատորմին լուսավարութիւնը Հայոց միտքին վրայ ազդու կերպով ներգործեր են, ոստի եւ պատրաստուած ծրարակիրը չէ գործադրուած: Այս ասիա տարբարակ մէջ

ժապէս շնորհապարտ մնացեր է անգլիական կառավարութեան, որուն թիշրքիոյ նկատմամբ ատենէ մը ի վեր է հետեւած բարեացակամ քաղաքականութեանը Եւրոպրը շատ կը հաւանի:

Հիւսկ ալ հայկական ցոյց մը կը վախցուի սեպտեմբեր 23ին համար: Չենք գիտեր քէ այդ քուսակներ ինչ նշանակութիւն ունի որ հայկական ցոյցի մը համար նկատակալարար կը քուսի: Թերեւս կը շփոթեն սեպտեմբեր 30ի հետ, որ 1895ի Ազգային մեծ բողոքարկութեան տարեդարձն է, եւ այս անգամ ալ օրը օրին Խաչին Մետեղոցին կոչուի: Բայց ասանց վարանելու Վստահօրէն կարելի է ըսել քէ տարածուած լուրերը պարզապէս նեկզամտութեան ծնունդ են: Եւ Հայերը կը լեցուին բանտերը, Հայաստանցիները, դեռ որքան որ կան Պոլիս, կը քշուին երկիր: Պոլիս պաշարուի վիճակի ներարկուած քաղքի մը երևոյթը ունի: Արտակարգ գորչութիւններ ձեռք կ'առնուին. հեծեայ զինուորներ ամեն գիշեր փողոցները կը շրջագային:

Ոստիկանութիւնը Բերս հայոց տուն մը կոխելով վեց հայ բռնած է, եւ բազմաթիւ բողոքներ ձեռք անցուցած է:

Թայմզին Պոլսէն կը հետագրուի քէ ոստիկանութիւնը աշարչութեամբ կը փնտռէ Ալիքան Կարապետեան անունը Հնչակեան մը որուն Պոլիս մտած բլլալու յորք ինացուած է:

«ԱՐՄԷՆԻԱ»ն որ ժամանակէ մը ի վեր դադրած էր սկսած է հրատարակուիլ:

**ԵՏՆԻԿ ՀԵԹԵՐԻԱ** հեղին յեղափոխական մարմնին անդամներէն ունեք Պոլիս ձերբակալուել են: Յռնական դեպքանտունը զողորմ պահանջեր է զանոնք:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻԻՐԲԵՐԸ** որոնք տարբարակ խոտուումներուն վստահելով պոլիս գացին անվիշապէս ձերբակալուելով բանտարկուել են:

ՀԱՍՏԵ ԵՒ ԲԱԺՆԵԳԻՆ

**ՆՈՐ ԿԵԱՆՔԸ** կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեգիրն է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամբիկայի համար տարեկան 2 եւ վեցամսեայ 1 տոլար:

**ՆՈՐ ԿԵԱՆՔԻ** վերաբերեալ նամակ սւ բաժնեգիրն զրկել ա՞ն՝

L. FRANK,  
27, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W